



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ 06(370) «19» ապրիլի 2019թ.

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

<b>ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ</b>		
86	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ԱՀ ՀՕ-8-Ն օրենքը	
87	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-9-Ն օրենքը	
88	«Տեղական ինքնակառավարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-10-Ն օրենքը	
89	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-11-Ն օրենքը	
90	«Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-12-Ն օրենքը	
91	«Ազգային անվտանգության մարմինների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-13-Ն օրենքը	
92	«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-14-Ն օրենքը	
93	«Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-15-Ն օրենքը	
94	«Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ ՀՕ-16-Ն օրենքը	
95	«Բնապահպանության և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-17-Ն օրենքը	
<b>ՅՈՒՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ</b>		
<b>ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</b>		

	<b>ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ</b>	
96	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 204-Ն որոշումը	
97	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 205-Ն որոշումը	
98	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 206-Ն որոշումը	
99	«Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 48-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 209-Ն որոշումը	
100	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 23-ի N 615-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 211-Ն որոշումը	
101	«Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 1-ի N 21-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 212-Ն որոշումը	
102	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 26-ի N 275-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 213-Ն որոշումը	
103	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի N 138 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 214-Ն որոշումը	
104	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի N 519-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 217-Ն որոշումը	
105	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 24-ի N 87-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 224-Ն որոշումը	
106	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 231-Ն որոշումը	
107	«Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը հավաստող համապատասխանության ազգային նշանի նմուշը (նկարագիրը), կիրառման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի N 522 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 232-Ն որոշումը	
108	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 21-ի N 1047-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու և ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» ԱՀ կառավարության N 233-Ն որոշումը	
109	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ	

	կառավարության N 241-Ն որոշումը	
110	«2019 թվականի համար էլեկտրական էներգիայի ու բնական գազի հաղորդման (փոխադրման) և բաշխման ցանցերում նորմատիվային (բնական) կորուստների առավելագույն չափերը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 245-Ն որոշումը	
111	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 246-Ն որոշումը	
112	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 248-Ն որոշումը	
113	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 249-Ն որոշումը	
114	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 250-Ն որոշումը	
115	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի N 306-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 255-Ն որոշումը	
116	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի N 307-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 256-Ն որոշումը	
117	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 16-ի N 618 որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 264-Ն որոշումը	
118	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 19-ի N 198-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 265-Ն որոշումը	
119	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 26-ի N 235-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 269-Ն որոշումը	
120	«Կենտրոնական մարմին նշանակելու մասին» ԱՀ կառավարության N 270-Ն որոշումը	
121	«Պետական նպաստների, ծնելիության և բազմազավակության իրթանման միջոցառումների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 20-ի N 15-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 273-Ն որոշումը	
	<b>ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ</b>	
122	ԱՀ Գերագույն դատարանի վարչական գործ ԸԻԴ /0231/05/16 որոշումը	

# ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի  
մարտի 27-ին

## ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

### ԳԼՈՒԽ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

#### **Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

1. Մույն օրենքով կարգավորվում են օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման բնագավառում ծագող իրավահարաբերությունները: Օրենքը սահմանում է օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը, նպատակները, սկզբունքները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելիս նրանց իրավունքները և պարտականությունները, օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները, օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը:

#### **Հոդված 2. Օպերատիվ-հետախուզական գործունեությունը կարգավորող իրավական ակտերը**

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենսդրությունը բաղկացած է Արցախի Հանրապետության Սահմանադրությունից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքից, «Դատախազության մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին», «Ոստիկանության մասին», «Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներից, սույն օրենքից, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերից և այլ իրավական ակտերից: Օպերատիվ-հետախուզական գործունեության նախապատրաստման և անցկացման գործելակերպը կարգավորվում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների նորմատիվ իրավական ակտերով:

#### **Հոդված 3. Օպերատիվ-հետախուզական գործունեության հասկացությունը**

1. Օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական ու հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումն է:

#### **Հոդված 4. Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակները**

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներն են՝

1) հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, կանխումը և խափանումը.

2) հանցագործությունը նախապատրաստող, կատարող կամ կատարած անձանց հայտնաբերումը.

3) քրեական պատասխանատվությունից խուսափող անձանց հետախուզումը և հայտնաբերումը, ինչպես նաև անհայտ կորած անձանց հետախուզումը.

4) վկաների, դիակի, հանցագործության հետքերի, առարկաների, իրեղեն ապացույցների և այլ իրերի, փաստաթղթերի հայտնաբերումը.

5) ազգային անվտանգության ապահովման համար անհրաժեշտ տեղեկությունների ձեռքբերումը.

6) Արցախի Հանրապետության տարածք ապրանքների օրինական ներմուծման և արտահանման նկատմամբ վերահսկողություն սահմանելը.

7) հարկային մարմինն հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտումների նախագուշացումը, կանխումը, խափանումն ու բացահայտումը.

8) քրեակատարողական հիմնարկների բնականոն գործունեության ապահովումը, քրեակատարողական հիմնարկներում նախապատրաստվող հանցագործությունների նախագուշացումը, կանխումը և բացահայտումը.

9) հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգությանն սպառնացող հանգամանքների առկայությունը, ինչպես նաև հատուկ պետական պաշտպանություն իրականացնող մարմնի կողմից՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական մարմիններին տրված ցուցումները, որոնք վերաբերում են հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգությանն սպառնացող հանգամանքների վերացմանը.

10) պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկություններին առնչվելու թույլտվության որոշման կայացման համար տեղեկություններ հավաքելը.

11) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ համագործակցող կամ համագործակցած անձանց (և նրանց ընտանիքի անդամների) անվտանգությունն ապահովելու համար տեղեկություններ հավաքելը.

12) ոստիկանության կողմից օրենքով սահմանված կարգով սահմանային գոտում գտնվելու թույլտվության համար տեղեկություններ հավաքելը.

13) օպերատիվ-հետախուզական գործունեությանը մասնակցելու կամ դրա իրականացման հետևանքով ստացված նյութերին ծանոթանալու թույլտվության մասին որոշում ընդունելու համար տեղեկություններ հավաքելը.

14) ազգային անվտանգության մարմիններում և ոստիկանությունում, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում այլ պետական մարմիններում աշխատանքի անցնելու համար դիմում ներկայացրած անձանց ուսումնասիրելու համար տեղեկություններ հավաքելը.

15) օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց Արցախի Հանրապետության քաղաքացիություն, Արցախի Հանրապետությունում քաղաքական ապաստան կամ կացության կարգավիճակ տալու մասին եզրակացություն կազմելու և որոշում ընդունելու համար տեղեկություններ հավաքելը:

#### **Հոդված 5. Օպերատիվ-հետախուզական գործունեության սկզբունքները**

1. Օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացվում է հետևյալ հիմնական սկզբունքների հիման վրա՝

- 1) օրինականության.
- 2) մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների ու ազատությունների և օրինական շահերի պաշտպանության և գերակայության.
- 3) գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցության.
- 4) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, աշխատանքի ձևերի, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնապահության.
- 5) օպերատիվ-հետախուզական գործունեության բազմակողմանիություն, լրիվության և օբյեկտիվության:

#### **Հոդված 6. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերի և փաստաթղթերի հրապարակայնությունը**

1. Յուրաքանչյուր անձ իր նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելուց կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվելուց՝ հանցագործության դեպքի բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով, կամ վնաս պատճառած արարքը քրեական օրենքով իրավաչափ համարվելուց կամ իր նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, իրավունք ունի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններից պահանջելու իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերը և փաստաթղթերը:

2. Նշված նյութերը և փաստաթղթերը տրամադրելը մերժվում է, եթե առկա է պետական կամ ծառայողական գաղտնիքի հրապարակման վտանգ, կամ երբ դրանով կարող են բացահայտվել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցները և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող կամ համագործակցած անձինք:

3. Մույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում և ժամկետում, եթե անձը չի պահանջում տրամադրել իր նկատմամբ իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների հետևանքով ստացված նյութերը և փաստաթղթերը, ապա դրանք ոչնչացվում են:

4. Մույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նյութերը ենթակա են ոչնչացման անձի նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժվելուց, կամ հարուցված քրեական գործի վարույթը կարճվելուց՝ հանցագործության դեպքի

բացակայության կամ արարքի կատարման մեջ հանցակազմի բացակայության պատճառով, կամ պատճառված վնասը քրեական օրենքով իրավաչափ համարվելուց կամ անձի նկատմամբ արդարացման դատավճիռ կայացվելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

### **Հոդված 7. Հատուկ տեխնիկական միջոցները**

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ տեխնիկական միջոցների ցանկը լիազոր պետական մարմնի ներկայացմամբ հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում կիրառվող հատուկ տեխնիկական միջոցները չպետք է վնաս պատճառեն մարդկանց կյանքին ու առողջությանը, ինչպես նաև շրջակա միջավայրին:

3. Արգելվում է գաղտնի տեղեկություններ ստանալու համար նախատեսված (մշակված, ծրագրված, հարմարեցված) հատուկ տեխնիկական և այլ միջոցների օգտագործումը և օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումը սույն օրենքով չլիազորված պետական մարմինների, ստորաբաժանումների կամ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից:

## **Գ Լ ՈՒ Ն 2**

### **ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ**

### **Հոդված 8. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները**

1. Օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու իրավունք ունեն՝

- 1) ռստիկանությունը.
- 2) ազգային անվտանգության մարմինները.
- 3) հարկային մարմինները:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված մարմիններն իրենց կառուցվածքում պետք է ունենան համապատասխան ստորաբաժանումներ, որոնց վրա է դրված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը: Այդ ստորաբաժանումների կառուցվածքը, ենթակայությունը, ինչպես նաև աշխատանքի կազմակերպման և օպերատիվ-հետախուզական միջոցառումների փաստաթղթավորման կարգը սահմանում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը:

3. Օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցներն իրենց գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում են օրենքով և ենթարկվում իրենց անմիջական ղեկավարին: Հրաման կամ ցուցում ստանալու դեպքում օպերատիվ ստորաբաժանման աշխատակիցը պարտավոր է ստացած հրամանի կամ ցուցումի օրինականության վերաբերյալ իր կասկածների մասին անհապաղ գրավոր զեկուցել հրամանը կամ ցուցումը տվողին կամ

նրա վերադասին կամ նրանց փոխարինող անձին: Եթե ցուցում տվողը գրավոր հաստատում է տրված հրամանը կամ ցուցումը, ապա օպերատիվ ստորաբաժանման աշխատակիցը պարտավոր է դա կատարել, բացառությամբ, եթե դա կհանգեցնի օրենքով սահմանված քրեական պատասխանատվության: Օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի կողմից այդ հրամանի կամ ցուցումի կատարման համար պատասխանատվությունը կրում է դրանք գրավոր հաստատած անձը:

4. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցները կարող են համատեղ ընդունված գերատեսչական նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով համագործակցել սույն օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելիս:

5. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները ֆինանսավորվում են պետական բյուջեի միջոցներից:

### **Հոդված 9. Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական վարչությունը**

1. Սույն օրենքով նախատեսված հեռախոսային խոսակցությունների և համացանցի վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումն ապահովում է միայն Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության համակարգում գործող օպերատիվ-տեխնիկական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) այդ օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինների միջնորդության հիման վրա՝ սույն օրենքով սահմանված կարգով:

2. Վարչության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենը: Վարչության անմիջական ղեկավարումն իրականացնում է Վարչության պետը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենը: Վարչության պետի պաշտոնն ազգային անվտանգության մարմիններում ծառայողների գլխավոր խմբի պաշտոն է:

3. Վարչությունը հեռահաղորդակցության օպերատորի մոտ ապահովում է համապատասխան օպերատիվ-տեխնիկական անհրաժեշտ պայմաններ՝ սույն օրենքով լիազորված մարմինների կողմից հեռախոսային խոսակցությունների և համացանցի վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու համար:

### **Հոդված 10. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների իրավունքները**

1. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն իրենց խնդիրներն իրականացնելիս իրավունք ունեն՝

1) բացահայտ կամ գաղտնի մեթոդներով իրականացնելու սույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված միջոցառումները.

2) հատուցումով կամ անհատույց, պայմանագրով կամ առանց դրա համագործակցելու օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականա-



ցնող մարմինների հետ գաղտնի համագործակցելու ցանկություն հայտնած անձանց հետ.

3) օգտագործելու օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների պաշտոնատար անձանց, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին պատկանող շինությունները, հատուկ և այլ տեխնիկական ու տրանսպորտային միջոցները:

2. Ազգային անվտանգության մարմինները և ոստիկանությունը սույն օրենքով սահմանված խնդիրներն իրականացնելու նպատակով Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են ստեղծել իրականում գոյություն չունեցող կազմակերպություններ, ինչպես նաև օգտագործել ազգային անվտանգության մարմինների պատրաստած քողարկող փաստաթղթեր:

3. Սույն օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ կարող են իրականացվել Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների, միջազգային իրավապահ կազմակերպությունների հարցումների հիման վրա:

4. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն իրավունք չունեն սույն հոդվածով նախատեսված իրենց իրավունքներն իրականացնելու ի շահ կամ ի վնաս որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի կամ միջամտելու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կուսակցությունների գործունեությանը:

#### **Չորված 11. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների պարտականությունները**

1. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները պարտավոր են՝

1) կատարել քննիչի պարտադիր գրավոր հանձնարարությունները, հետաքննության մարմնի հանձնարարությունները, դատախազի պարտադիր գրավոր ցուցումները, քննիչի և դատարանի որոշումները՝ անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ.

2) ստուգել ստացված անանուն հաղորդումը, եթե հաղորդմամբ ներկայացվող տեղեկությունը բավարար չափով հիմնավորված է, վերաբերում է կոնկրետ պաշտոնատար անձի կամ մարմնի և պարունակում է տվյալներ, որոնք ողջամտորեն կարող են ստուգվել.

3) Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով համագործակցել միջազգային իրավապահ կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների հետ.

4) հանցավոր ոտնձգություններից պաշտպանել օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցներին, այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց, քրեական դատավարությանը մասնակցող անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին.

5) իրենց լիազորություններն իրականացնելիս համագործակցել իրավապահ մարմինների հետ՝ նրանց փոխանցելով իրենց հայտնի դարձած և այդ մարմինների իրավասությանը վերաբերող տեղեկությունները,

բացառությամբ սույն օրենքով նախատեսված ոչնչացման ենթակա տեղեկությունների:

**Հոդված 12. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձինք**

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստմանն ու անցկացմանն անվճար կամ պայմանագրի հիման վրա վճարովի հիմունքներով կարող են ներգրավվել չափահաս և գործունակ անձինք՝ պահպանելով համագործակցության գաղտնիությունը: Համագործակցությունը հնարավոր է այդ անձանց համաձայնությամբ: Այդ անձինք պարտավոր են չհրապարակել համագործակցության առնչությամբ իրենց հայտնի դարձած տեղեկությունները, ինչպես նաև ակնհայտ կեղծ տեղեկություններ չտրամադրել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին: Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները պարտավոր են գաղտնի պահել իրենց հետ գաղտնի հիմունքներով համագործակցող և համագործակցած անձանց անհատական տվյալները:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց հավաքագրման, ներդրման և վճարման կարգը սահմանվում է այդ մարմինների նորմատիվ իրավական ակտերով:

3. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններն իրավունք չունեն օպերատիվ-հետախուզական գործունեության նախապատրաստմանն ու անցկացմանը որպես համագործակցող անձ ներգրավելու՝

- 1) պատգամավորների.
- 2) Կառավարության անդամների.
- 3) դատավորների.

4) ազգային անվտանգության մարմինների, ոստիկանության, զինված ուժերի աշխատակիցների, բացառությամբ օրենքով սահմանված կարգով իրականացվող հակահետախուզական գործունեության իրականացման նպատակով ներգրավման, ինչպես նաև դատախազության, քննչական մարմինների և այլ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցների.

- 5) Արցախի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին:

**Հոդված 13. Օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցների և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց, նրանց ընտանիքի անդամների ու խնամքի տակ գտնվող անձանց անվտանգությունը և սոցիալական պաշտպանությունը**

1. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձինք կարող են ազատվել հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվությունից՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները պարտավոր են ապահովել օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստմանն ու անցկացմանը ներգրավված անձանց և նրանց ընտանիքի անդամների պաշտպանությունը, եթե առկա է նրանց կյանքին և առողջությանը սպառնացող իրական վտանգ, որը պայմանավորված է այդ մարմինների հետ նրանց համագործակցությամբ:

3. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող, ինչպես նաև հանցագործությունների բացահայտմանն ու հանցագործների հայտնաբերմանն աջակցած անձինք կարող են ստանալ դրամական և այլ պարգևատրումներ: Այդ պարգևատրումների գումարները հարկման և հայտարարագրման ենթակա չեն:

4. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնող մարմինների հետ գաղտնի համատեղ համագործակցող անձի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառմանը մասնակցելու հետևանքով զոհվելու դեպքում նրա ընտանիքին և խնամքի տակ գտնվող անձանց պետական բյուջեի միջոցներից վճարվում է միանվագ նպաստ՝ զոհվածի ամսական դրամական բավարարման տասը տարվա գումարի չափով, և օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակվում է կերակրողին կորցնողի դեպքում կենսաթոշակ: Իսկ եթե անձը նշված պայմաններում վիրավորվել է, ստացել է խեղում, կոնտուզիա կամ հաշմանդամություն, ապա պետական բյուջեի միջոցներից նրան վճարվում է միանվագ նպաստ՝ ամսական դրամական բավարարման հինգ տարվա գումարի չափով, և օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակվում է հաշմանդամության կենսաթոշակ:

5. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների պաշտոնատար անձանց՝ կազմակերպված հանցավոր խմբերում հատուկ առաջադրանքներ կատարելու, ինչպես նաև հաստիքային գաղտնի աշխատակիցների կարգավիճակով ծառայության ժամանակահատվածը արտոնյալ հաշվարկով մտնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնում ծառայության ընդհանուր ստաժի մեջ, որի հաշվարկման կարգն ու պայմանները սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

### **ԳԼՈՒԽ 3**

#### **ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ**

#### **Հոդված 14. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները**

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում կարող են անցկացվել օպերատիվ-հետախուզական հետևյալ միջոցառումները.

- 1) օպերատիվ հարցում.
- 2) օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում.
- 3) համեմատական հետազոտումների նմուշների հավաքում.
- 4) հսկիչ գնում.
- 5) վերահսկելի մատակարարում և գնում.
- 6) իրերի և փաստաթղթերի հետազոտում.
- 7) արտաքին դիտում.
- 8) ներքին դիտում.

9) անձի նույնացում.

10) շենքերի, շինությունների, կառույցների, տեղանքի և տրանսպորտային միջոցների հետազոտում.

11) նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում.

12) հեռախոսային խոսակցությունների վերահսկում.

13) օպերատիվ ներդրում.

14) օպերատիվ փորձարարություն.

15) ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում.

16) կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում.

17) համակարգչային տեղեկատվության ստացում:

2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումները սահմանվում են միայն օրենքով:

3. Ոստիկանությունն իրավունք ունի անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ և 5-17-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

4. Ազգային անվտանգության մարմիններն իրավունք ունեն անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-3-րդ և 5-17-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

5. Հարկային մարմիններն իրավունք ունեն անցկացնելու սույն հոդվածի 1-ին մասի 1-7-րդ, 10-րդ և 13-14-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները:

#### **Հոդված 15. Օպերատիվ հարցումը**

1. Հարցումը կատարված, նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության ընթացքում պարզաբանման ենթակա այլ հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ հավաքելն է՝ իրականում կամ հավանաբար այդպիսի տեղեկատվության տիրապետող իրավաբանական և ֆիզիկական անձանց հարցեր տալու (հարցումներ անելու) և պատասխաններ ստանալու միջոցով:

#### **Հոդված 16. Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերումը**

1. Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերումը օպերատիվ-հետախուզական գործունեության խնդիրների իրականացման նպատակով օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող անձանց և փաստերի վերաբերյալ տեղեկությունների հավաքումն է:

#### **Հոդված 17. Համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքումը**

1. Համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքումը համապատասխան նյութերի, առարկաների, իրերի, փաստաթղթերի և այլ նմուշների հավաքումն է (ստացումն է)՝ անհրաժեշտ համեմատություններ և ուսումնասիրություններ կատարելու համար:

### **Հոդված 18. Հսկիչ գնումը**

1. Հսկիչ գնումն իրականացվում է ստանդարտացման և չափումների միասնականության ապահովման օրենսդրության և հարկային հաշվառման կանոնների պահպանումը ստուգելու, ինչպես նաև հետագա հետազոտությունների նպատակով նմուշներ ստանալու, ապրանքների, ծառայությունների և աշխատանքների իրական գների բացահայտման համար:

### **Հոդված 19. Վերահսկելի մատակարարումը և գնումը**

1. Վերահսկելի մատակարարումը և գնումը ապրանքների և ծառայությունների շրջանառության վերահսկումն է, այդ թվում՝ ապրանքներն ու ծառայությունները գնելու կամ այդպիսիք վաճառելու միջոցով հանցագործության մասնակիցներին պարզելու նպատակով:

2. Այն առարկաների, ապրանքների և արտադրանքի վերահսկելի մատակարարումը և գնումը, որոնց ազատ իրացումն արգելված է, կամ որոնց շրջանառությունը սահմանափակված է, իրականացվում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշման հիման վրա:

### **Հոդված 20. Իրերի և փաստաթղթերի հետազոտումը**

1. Իրերի և փաստաթղթերի հետազոտումը դրանց գնումն է, հատկանիշների և բովանդակության բացահայտումը՝ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց, ինչպես նաև հետազոտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց: Հետազոտման ընթացքում և դրանից հետո ապահովվում է օբյեկտների և դրանց վրա եղած հետքերի պահպանությունը:

### **Հոդված 21. Արտաքին դիտումը**

1. Արտաքին դիտումը, առանց բնակարանի անձեռնմխելիության խախտման, անձանց հետևելը կամ առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է բաց տարածությունում կամ հասարակական վայրերում՝ հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց, ինչպես նաև դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:

### **Հոդված 22. Ներքին դիտումը**

1. Ներքին դիտումը բնակարանում հատուկ և այլ տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ առանց դրանց անձին (անձանց) հետևելն ու առանձին դեպքերի և իրադարձությունների ընթացքի վերահսկումն է, ինչպես նաև դիտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման,

ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:

2. Սույն օրենքում բնակարան հասկացությունը օգտագործվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իմաստով:

### **Հոդված 23. Անձի նույնացումը**

1. Անձի նույնացումը օպերատիվ-հետախուզական նպատակներով նրա ինքնությունը պարզելն է արտաքին նշանների, մատնահետքերի և քրեագիտական այլ հետքերի հիման վրա:

### **Հոդված 24. Շենքերի, շինությունների, կառույցների, տեղանքի և տրանսպորտային միջոցների հետազոտումը**

1. Շենքերի, շինությունների, կառույցների, տեղանքի և տրանսպորտային միջոցների հետազոտումը դրանց արտաքին զննումն է, հատկանիշների և այլ տեղեկությունների բացահայտումն է հատուկ և այլ տեխնիկական միջոցներով կամ առանց դրանց, ինչպես նաև հետազոտման արդյունքների ամրագրումը տեսանկարահանման, ձայնագրման, լուսանկարահանման, էլեկտրոնային և այլ կրիչների միջոցով կամ առանց դրանց:

### **Հոդված 25. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը**

1. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ հեռապատճենի (ֆաքսի) վերահսկումը՝ տեխնիկական միջոցների օգտագործմամբ կամ առանց դրանց, փոխանցվող նամակների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների, այդ թվում՝ դրանց բովանդակության հետազոտումն է և դրանց արդյունքների ամրագրումը, ինչպես նաև նամակի, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներն ուղարկող անձի նույնացումը նրա ձեռագրի միջոցով կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

### **Հոդված 26. Հեռախոսային խոսակցությունների վերահսկումը**

1. Հեռախոսային խոսակցությունների վերահսկումը հատուկ և այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ իրականացվող խոսակցությունների, այդ թվում՝ համացանցային հեռախոսային խոսակցությունների և էլեկտրոնային հաղորդումների գաղտնի վերահսկումն է, որը նշանակում է՝

1) հեռախոսային ֆիքսված ցանցի դեպքում՝

ա. հեռախոսային խոսակցության ձայնագրումը կամ դրա բովանդակության այլ ձևով ամրագրումը,

բ. տվյալ հեռախոսահամարի հետ ուղիղ կապ ունեցած հեռախոսահամարները, հեռախոսային խոսակցությունն սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը,

գ. տվյալ հեռախոսահամարի հետ անուղղակի (միջնորդավորված) եղանակով կապ ունեցած հեռախոսահամարները, հեռախոսային խոսակցությունն սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը,

դ. հեռախոսային զանգի վերահասցեագրման կամ փոխանցման դեպքում այն հեռախոսահամարի պարզումը, որի վրա փոխանցվել է զանգը.

2) բջջային հեռախոսային ցանցի դեպքում՝

ա. հեռախոսային խոսակցության, ներառյալ՝ կարճ հաղորդագրությունների (sms) և ձայնային հաղորդագրությունների ձայնագրումը կամ դրանց բովանդակության այլ ձևով ամրագրումը,

բ. տվյալ հեռախոսահամարի հետ ուղիղ կապ ունեցած հեռախոսահամարները, հեռախոսային խոսակցությունները սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը,

գ. տվյալ հեռախոսահամարի հետ անուղղակի (միջնորդավորված) եղանակով կապ ունեցած հեռախոսահամարները, հեռախոսային խոսակցությունները սկսելու ամսաթիվը, սկիզբը և ավարտը պարզելու համար անհրաժեշտ տվյալներ հավաքելը և (կամ) ամրագրելը,

դ. հեռախոսային զանգի վերահասցեագրման կամ փոխանցման դեպքում այն հեռախոսահամարի պարզումը, որի վրա փոխանցվել է զանգը.

3) համացանցային հաղորդակցության, այդ թվում՝ համացանցային հեռախոսային խոսակցությունների և համացանցի միջոցով փոխանցվող էլեկտրոնային հաղորդումների դեպքում հաղորդման ձայնագրումը կամ դրա բովանդակության այլ ձևով ամրագրումը, ինչպես նաև տվյալները, որոնց միջոցով կարող են պարզվել՝

ա. համացանցին միանալու և ցանցից դուրս գալու աշխարհագրական վայրը, օրը, ժամը և տևողությունը, ներառյալ՝ IP (համացանց պրոտոկոլի) հասցեն,

բ. համացանցն օգտագործողի կամ բաժանորդի անունը և անհատականացման տվյալները (user ID),

գ. հեռախոսի համարը, որով նա միանում է ընդհանուր օգտագործման հեռախոսացանցին, համացանցային հասցեն, համացանցային հեռախոսային զանգն ստացողի անունը կամ այդ անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին յուրաքանչյուր տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել նրա ինքնությունը:

## **Հոդված 27. Օպերատիվ ներդրումը**

1. Օպերատիվ ներդրումը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց գաղտնի ներդրումն է որոշակի մարմիններում, կազմակերպություններում կամ խմբավորումներում:

### **Հոդված 28. Օպերատիվ փորձարարությունը**

1. Օպերատիվ փորձարարությունը որոշակի հանգամանքներում այս կամ այն իրադարձությունների կատարման հնարավորության ստուգումն է՝ օպերատիվ հետախուզական գործունեության ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքների կամ դրանց մի մասի վերարտադրության միջոցով:

### **Հոդված 29. Ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը**

1. Ֆինանսական տվյալների մատչելիության ապահովումը և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկումը բանկային կամ այլ ֆինանսական կազմակերպություններից բանկային և այլ տեսակի հաշիվների (ավանդների) վերաբերյալ տեղեկությունների ստացումն է, ինչպես նաև իրականացվող ֆինանսական գործարքների մշտական վերահսկումը առանց այն անձանց գիտության, որոնց վերաբերում են այդ գործարքները:

### **Հոդված 30. Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը**

1. Կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակումը՝ որպես օպերատիվ-հետախուզական միջոցառում, կարող է իրականացվել միայն կաշառք ստանալու կամ կաշառք տալու հանցագործության բացահայտման համար՝ բացառապես կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկ ստացած անձի գրավոր հայտարարության հիման վրա:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված «կաշառք ստանալ» և «կաշառք տալ» հասկացությունները սույն օրենքում օգտագործվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքով սահմանված իմաստով:

3. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները հավաստվում են բացառապես տեսանկարահանման կամ ձայնագրման միջոցով: Ընդ որում՝ տեսանկարահանումը կամ ձայնագրումը անձի բնակարանում իրականացվում է բացառապես դատարանի որոշմամբ:

### **Հոդված 31. Համակարգչային տեղեկատվության ստացումը**

1. Համակարգչային տեղեկատվության ստացումն օպերատիվ-հետախուզական խնդիրների լուծման համար օպերատիվ-տեխնիկական միջոցառում է՝ ուղղված համակարգչում կամ համակարգչային ցանցում շրջանառվող, ինչպես նաև մեքենայական կրիչների վրա պահվող և օրենքով պահպանվող տեղեկատվական տվյալների հավաքմանը՝ դրանց հետագա ամրագրմամբ (կամ առանց դրա):



#### ԳԼՈՒԽ 4

### ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ: ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

#### **Հոդված 32. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմանը ներկայացվող ընդհանուր պահանջները**

1. Հեռախոսային խոսակցությունների վերահսկումը ոստիկանության կողմից անցկացվում է՝ Վարչության կողմից օպերատիվ-տեխնիկական պայմաններ ստեղծելով, այդ թվում՝ կապի ուղիների և միջոցների տրամադրումով, ոստիկանության կողմից ստացվող տվյալների, տեղեկատվության և հաղորդումների անմիջական հսկմամբ և ամրագրմամբ, ընդ որում՝ բացառելով ազգային անվտանգության մարմինների և Վարչության կողմից այդ տվյալների, տեղեկատվության և հաղորդումների հսկումը և (կամ) ամրագրումը:

2. Համացանցով փոխանցվող հաղորդումների, միջազգային նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը ոստիկանության կողմից անցկացվում է՝ ազգային անվտանգության մարմինների կողմից օպերատիվ-տեխնիկական պայմաններ ստեղծելով, այդ թվում՝ կապի ուղիների և միջոցների տրամադրումով, ոստիկանության կողմից ստացվող տվյալների, տեղեկատվության և հաղորդումների անմիջական հսկմամբ և ամրագրմամբ, ընդ որում՝ բացառելով ազգային անվտանգության մարմինների կողմից այդ տվյալների, տեղեկատվության և հաղորդումների հսկումը և (կամ) ամրագրումը:

3. Նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկումը, բացառությամբ միջազգային նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների փոխանցման, ոստիկանությունն իրավունք ունի անցկացնելու ինչպես ինքնուրույն, այնպես էլ ազգային անվտանգության մարմինների կողմից կապի միջոցների տրամադրումով՝ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով:

4. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ և 17-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

5. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելիս հեռահաղորդակցության և փոստային կապի կազմակերպությունները պարտավոր են Վարչության պահանջով տրամադրել տեխնիկական համակարգեր և ստեղծել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմաններ:

6. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելիս հեռահաղորդակցության և փոստային կապի կազմակերպությունները պարտավոր են ազգային անվտանգության մարմինների, իսկ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում՝ ոստիկանության պահանջով տրամադրել տեխնիկական համակարգեր և ստեղծել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմաններ:

7. Արգելվում է անցկացնել սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ և 17-րդ կետերով նախատեսված օպերատիվ միջոցառումները, երբ անձը, որի նկատմամբ իրականացվելու է այդ միջոցառումը, հաղորդակցվում է իր փաստաբանի հետ: Անհապաղ ոչնչացման են ենթակա սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ և 17-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման նպատակից անկախ պատճառով ստացված փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկությունները:

### **Հոդված 33. Հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման ընթացակարգը**

1. Հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնելու իրավասություն ունեցող մարմինները, ներառյալ՝ ազգային անվտանգության մարմինները, հեռախոսային խոսակցության վերահսկում իրականացնելու նպատակով Վարչություն են ներկայացնում դատարանի որոշման քաղվածքը, իսկ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում՝ օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշումը: Քաղվածքը տրվում է դատարանի կողմից՝ նշված օպերատիվ-հետախուզական գործունեության վերաբերյալ որոշման հետ միաժամանակ, և այն պետք է պարունակի միայն վերահսկման ենթակա հեռախոսահամարը:

2. Այն դեպքերում, եթե սույն հոդվածով օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ Արցախի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների, ապա Վարչությունը սույն հոդվածով նախատեսված կարգով ապահովում է այդ միջոցառումների իրականացումը, սակայն այդ օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման միջնորդությամբ Վարչությանը դիմած մարմինը պարտավոր է 48 ժամվա ընթացքում Վարչություն ներկայացնել դրանց իրականացումը թույլատրելու կամ չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ 48 ժամվա ընթացքում դատարանի թույլտվությունը չներկայացնելու կամ սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը չթույլատրելու մասին դատարանի որոշման քաղվածքը Վարչություն ներկայացնելու դեպքում դրանց անցկացումն անմիջապես դադարեցվում է, իսկ արդեն ձեռք բերված տեղեկությունները և նյութերը միջոցառումն

իրականացնող մարմնի կողմից ենթակա են անհապաղ ոչնչացման: Սույն մասով նախատեսված յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենն անհապաղ զեկուցում է Արցախի Հանրապետության նախագահին:

4. Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տնօրենն օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման իրավասություն ունեցող յուրաքանչյուր մարմնի կտրվածքով հաջորդ տարվա հունվարի 31-ից ոչ ուշ Արցախի Հանրապետության նախագահին տարեկան հաշվետվություն է ներկայացնում, որը պարունակում է նախորդ տարվա ընթացքում՝

1) սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ Վարչություն ներկայացրած միջնորդությունների ընդհանուր թվաքանակը.

2) այն միջնորդությունների թվաքանակը, որ բերվել են առանց դատարանի որոշման քաղվածքի, և հետագայում քաղվածքը չի ներկայացվել.

3) այն միջնորդությունների թվաքանակը, որ բերվել են առանց դատարանի որոշման քաղվածքի, իսկ դատարանը հետագայում իր որոշմամբ չի թույլատրել նման օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը:

#### **Հոդված 34. Օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման նկատմամբ անմիջական վերահսկողությունը**

1. Սույն օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման նկատմամբ անմիջական վերահսկողություն է իրականացնում այդ միջոցառումներն անցկացնելու մասին որոշում կայացրած պաշտոնատար անձը, որը անձնական պատասխանատվություն է կրում օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման օրինականության համար:

#### **Հոդված 35. Դատական վերահսկողությունը օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ**

1. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումները, ինչպես նաև արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումը, եթե արտաքին դիտման արդյունքների ամրագրումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին, կարող են անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ:

2. Սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար դատարանի թույլտվությունը ստանալու համար օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարին ներկայացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը և միջնորդությունը՝ օպերատիվ-հետախուզական

միջոցառումն անցկացնելու համար դատարան դիմելու վերաբերյալ: Որոշումը և դրան կցվող նյութերը դատարան է ներկայացնում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

3. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող իրավասու մարմինը սույն օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետով և 2-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված տեղեկատվությունը ստանալու վերաբերյալ համապատասխան միջնորդություն կարող է ներկայացնել դատարան միայն ահաբեկչության կամ Արցախի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

4. Եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման կամ Արցախի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձությունների կամ գործողությունների, որոնց անցկացման համար սույն օրենքով պարտադիր է համարվում դատարանի թույլտվությունը, ապա օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարի որոշման հիման վրա թույլատրվում է նման միջոցառումների անցկացումը 48 ժամվա ընթացքում՝ այդ մասին Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ծանուցելով դատարանին: Եթե դատարանը բավարար չի համարում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման հիմքերը, ապա դրա անցկացումն անմիջապես դադարեցվում է, իսկ դրա արդյունքում ձեռք բերված տեղեկությունները և նյութերը անհապաղ ոչնչացվում են: Հակառակ դեպքում դատարանը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը թույլատրելու մասին: Սույն մասի դրույթները չեն տարածվում սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների և 33-րդ հոդվածով նախատեսված հարաբերությունների նկատմամբ:

### **Հոդված 36. Դատախազական հսկողությունը օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ**

1. Նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազը հսկողություն է իրականացնում օպերատիվ-հետախուզական գործունեության օրինականության նկատմամբ՝ օրենքով իրեն վերապահված լիազորությունների սահմաններում: Դատախազի կողմից հսկողության ենթակա չեն օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման և իրականացման եղանակները:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված լիազորություններն իրականացնելիս դատախազի պահանջով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ղեկավարները պարտավոր են նրան ներկայացնել այդ միջոցառումների անցկացման համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

Դատախազը պարտավոր է ապահովել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների՝ իրեն ներկայացրած փաստաթղթերի և տեղեկությունների գաղտնիությունը:

3. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային աշխատակիցների և այդ մարմինների հետ գաղտնի համագործակցող անձանց վերաբերյալ տեղեկությունները դատախազին ներկայացվում են միայն այդ անձանց համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ առաջ է գալիս նրանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը:

## **ԳԼՈՒԽ 5**

### **ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

#### **Հոդված 37. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու մասին որոշման հիմքերը**

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն անցկացվում են օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի որոշման հիման վրա, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման որոշում կայացնելու հիմք են դատախազի գրավոր ցուցումները, քննիչի, հետաքննության մարմնի և դատարանի որոշումները՝ իրենց վարույթում գտնվող քրեական գործերով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու վերաբերյալ, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի պատճառաբանված միջնորդությունը:

#### **Հոդված 38. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի պատճառաբանված միջնորդությունը և դրա քննարկման կարգը**

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի պատճառաբանված միջնորդության մեջ պետք է նշվեն՝

1) օպերատիվ-հետախուզական այն միջոցառումը (միջոցառումները), որ (որոնք) նախատեսվում է (են) անցկացնել.

2) օպերատիվ-հետախուզական միջոցառման կամ միջոցառումների անցկացման հիմքերը.

3) տվյալ տեսակի միջոցառումն անցկացնելու անհրաժեշտությունը հիմնավորող հանգամանքները.

4) այն տեղեկատվությունը, նյութերը կամ փաստաթղթերը, որոնք նախատեսվում է ստանալ դրա հետևանքով.

5) միջոցառման կամ միջոցառումների անցկացման տեղը, սկիզբը և ավարտը:

2. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը պետք է պարունակի նաև այն հեռախոսահամարը (հեռախոսահամարները), որը (որոնք) լսվելու է (են):

3. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը պետք է պարունակի նաև փոստային կամ էլեկտրոնային հասցեն, որը վերահսկվելու է, որոնողական հետաքրքրություն ներկայացնող բառերը կամ բառակապակցությունները (փոստային առաքումների և այլ հաղորդումների վերահսկման դեպքում փոստային կամ էլեկտրոնային հասցեի, որոնողական հետաքրքրություն ներկայացնող բառերի կամ բառակապակցությունների բացակայության դեպքում կարող են ներկայացվել անձի ձեռագրի նմուշը կամ այդ անձին նույնացնելու համար բավարար այլ հատկանիշներ, որի նամակագրության, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումները պետք է վերահսկվեն):

4. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը պետք է պարունակի նաև վերահսկվող բանկային հաշվի (ավանդի) տվյալները, տվյալներ այն ֆինանսական գործարքների վերաբերյալ, որոնք պետք է վերահսկվեն, ինչպես նաև այն անձանց անհատական տվյալները, որոնց վերաբերում են այդ գործարքները, կամ որոնց պատկանում է բանկային հաշիվը:

5. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու վերաբերյալ միջնորդությանը կից պետք է ներկայացվի նաև կաշառք ստանալու կամ կաշառք տալու առաջարկության վերաբերյալ համապատասխան անձի հայտարարությունը:

6. Օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու հիմքերի բավարար լինելը ստուգելու համար օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը կարող է միջնորդությունը ներկայացրած օպերատիվ ստորաբաժանման աշխատակցից պահանջել բացատրություններ և լրացուցիչ այլ նյութեր:

7. Միջնորդությունը քննարկում է օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը միանձնյա՝ միջնորդություն ներկայացրած աշխատակցի մասնակցությամբ: Հարցի քննարկումից հետո օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելը թույլատրելու կամ միջնորդությունը մերժելու մասին՝ որոշման մեջ նշելով բավարարման կամ մերժման հիմքերը:

8. Այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման հապաղումը կարող է հանգեցնել ահաբեկչության կատարման, կամ հնարավոր են Արցախի Հանրապետության պետական, ռազմական կամ բնապահպանական անվտանգությանն սպառնացող իրադարձություններ կամ գործողություններ, ապա թույլատրվում է նման միջոցառումների անցկացումը՝ այդ մասին վեց ժամվա ընթացքում տեղյակ պահելով օպերատիվ ստորաբաժանման ղեկավարին: Եթե օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը բավարար չի համարում օպերատիվ-հետախուզական միջոցառման

անցկացման հիմքերը, ապա դրա անցկացումն անմիջապես դադարեցվում է, իսկ դրա հետևանքով ձեռք բերված տեղեկությունները և նյութերը անհապաղ ոչնչացվում են: Հակառակ դեպքում օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը տեղեկացվելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում, որոշում է կայացնում օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը թույլատրելու մասին: Սույն մասի դրույթները չեն տարածվում հեռախոսային խոսակցությունների վերահսկում օպերատիվ-հետախուզական միջոցառման, ինչպես նաև այն օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում ծագող հարաբերությունների վրա, որոնք կարող են անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ:

### **Հոդված 39. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը**

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշման մեջ պետք է նշվեն սույն օրենքի 38-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերով նախատեսված բոլոր տեղեկությունները, ինչպես նաև որոշումը կայացրած օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի անունը, ազգանունը և պաշտոնը, թե այդ միջոցառումն ում վրա է տարածվում, որոշում կատարելու համար իրավասու օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի անունը, ազգանունը և պաշտոնը:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինն իրավունք չունի իրականացնելու այնպիսի գործողություններ, որոնք նախատեսված չեն օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու մասին որոշմամբ:

3. Եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում այն անձի վերաբերյալ, ում նկատմամբ այդ միջոցառումներն իրականացվում են, ձեռք են բերվել տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր, որոնց ստացումը նախատեսված չէր տվյալ միջոցառումներն անցկացնելու մասին որոշմամբ, ապա դրանք չեն կարող համարվել որպես թույլատրելի ապացույցներ և ենթակա են ոչնչացման, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները գործել են բարեխղճորեն, և

2) ստացված տեղեկությունները պարունակում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կամ դրա նախապատրաստման վերաբերյալ տեղեկություններ, և

3) այդ տեղեկությունների ձեռքբերման համար սույն օրենքով թույլատրվում է իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը: Սույն մասով նախատեսված տեղեկությունների, նյութերի և փաստաթղթերի վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն:

### **Հոդված 40. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ժամկետները**

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշման ժամկետի հաշվարկումը սկսվում է դրա ընդունման օրից և չի կարող

երկու ամսից ավելի լինել: Որոշման ժամկետը կարող է երկարաձգվել օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման մասին որոշման ընդունման համար սույն օրենքով սահմանված կարգով:

2. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ և 17-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների, ինչպես նաև սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման ընդհանուր ժամկետը չի կարող 12 ամսից ավելի տևել:

3. Սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումը նույն անձի նկատմամբ նույն անձի կողմից տրված նույն հայտարարության հիման վրա կարող է իրականացվել միայն մեկ անգամ:

## ԳԼՈՒԽ 6

### ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

#### **Հոդված 41. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործումը**

1. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները, բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ և 9-րդ կետերով նախատեսված միջոցառումների արդյունքների, քրեական գործով կարող են որպես թույլատրելի ապացույցներ համարվել միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Դրանց օգտագործումը արգելվում է, եթե այդ տվյալները ստացվել են սույն օրենքի խախտմամբ և դրանք լրիվ չափով չեն բավարարում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով ապացույցներին ներկայացված պահանջներին:

2. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն արձանագրում է դրանք անցկացնող պաշտոնատար անձը: Արձանագրությունում պետք է նշվեն օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացման տեղը, ժամանակը, հանգամանքները, օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացնող օպերատիվ աշխատակցի, օպերատիվ-հետախուզական միջոցառման այլ մասնակիցների անունները, ազգանունները, պաշտոնները, ինչպես նաև այն անձանց (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) անունները և ազգանունները, որոնց վրա տարածվում են օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում ձեռնարկված բոլոր գործողությունները այն հաջորդականությամբ, ինչպես որ դրանք կատարվել են, կիրառված գիտատեխնիկական մեթոդները և միջոցները, ինչպես նաև միջոցառման հետևանքով ձեռք բերված տեղեկությունները, նյութերը և փաստաթղթերը: Արձանագրությունը ստորագրում է օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացնող պաշտոնատար անձը (անձինք):

3. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները քրեական վարույթն իրականացնող մարմիններին ներկայացնելու կարգը սահմանվում է օրենքով և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների իրավական ակտերով: Օպերատիվ-հետախու-



զական գործունեություն իրականացնող մարմինը սույն օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում ստացված տեղեկատվությունը կարող է փոխանցել միայն քրեական վարույթ կամ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող այլ մարմինների՝ նրանց խնդրանքով օրենքով իրենց վերապահված կոնկրետ լիազորության իրականացման համար, բացառությամբ սույն օրենքով սահմանված ոչնչացման ենթակա տեղեկությունների:

4. Սույն օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կազմված արձանագրությունը հիմք է հանդիսանում Արցախի Հանրապետության հարկային օրենսդրությամբ հարկային իրավախախտումների համար սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու համար հետևյալ դեպքերում.

1) առանց օրենքով սահմանված պետական գրանցման (հաշվառման) կամ առանց հարկային մարմիններում հաշվառման ձեռնարկատիրական գործունեության (ապօրինի գործունեության) հայտնաբերման դեպքում.

2) ապօրինի գործունեություն իրականացնողի մոտ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չձևակերպված վարձու աշխատողներ հայտնաբերելու դեպքերում.

3) «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան՝ լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու (այդ թվում՝ լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը օրենքով սահմանված կարգով կասեցված լինելու) դեպքերում.

4) ապրանքների մատակարարման կամ տեղափոխության փաստաթղթավորման համար «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված պահանջների խախտման՝ օրենքով սահմանված պահանջները չբավարարող ուղեկցող փաստաթղթով կամ առանց ուղեկցող փաստաթղթի կամ առանց ուղեկցող փաստաթղթերի գրանցման՝ ապրանքների մատակարարման կամ տեղափոխության հայտնաբերման դեպքերում.

5) արգելված գործունեության հայտնաբերման դեպքերում:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված խախտումներ հայտնաբերելու նպատակով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում հարկ վճարողի պահանջով հարկային մարմնի պաշտոնատար անձը ներկայացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու մասին որոշման քաղվածքը:

6. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված դեպքերում հարկային պարտավորությունները հաշվարկում և գանձման է առաջադրում հարկային մարմինը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակներում և նույն օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտով:

7. Եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման ընթացքում ձեռք են բերվում այնպիսի տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր, որոնք չեն վերաբերում այն անձին, որի նկատմամբ

իրականացվում են այդ միջոցառումները, և որոնց ստացումը նախատեսված չէր տվյալ միջոցառումներն անցկացնելու մասին որոշմամբ, ապա դրանք չեն կարող համարվել որպես թույլատրելի ապացույցներ և ենթակա են ոչնչացման, բացառությամբ, եթե՝

1) օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները գործել են բարեխղճորեն, և

2) ստացված տեղեկությունները պարունակում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կամ դրա նախապատրաստման վերաբերյալ տեղեկություններ, և

3) այդ տեղեկությունների ձեռքբերման համար սույն օրենքով թույլատրվում է իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառման անցկացումը: Սույն մասով նախատեսված տեղեկությունների, նյութերի և փաստաթղթերի վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն:

#### **Հոդված 42. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների մասին տեղեկությունների պաշտպանությունը**

1. Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ուժերի, միջոցների ու աղբյուրների, մեթոդների, պլանների, այդ միջոցառումների արդյունքների, դրանց ֆինանսավորման, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնիության հիման վրա համագործակցող և համագործակցած անձանց մասին տեղեկությունները հանդիսանում են պետական գաղտնիք:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների և այդ մարմինների հետ գաղտնիության հիման վրա համագործակցող անձանց մասին տեղեկությունների հրապարակումը թույլատրվում է միայն նրանց գրավոր համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ պետական գաղտնիքի հրապարակման համար օրենքով սահմանված կարգով:

**ԳԼՈՒԽ 7**  
**ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՑԹ**

**Հոդված 43. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետն ուժի մեջ կմտնի 2020 թվականի հունվարի 1-ից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

2019թ. ապրիլի 12  
Ստեփանակերտ  
ՀՕ-8-Ն

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

Ընդունված է 2019 թվականի  
մարտի 27-ին

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 17-ի քրեական դատավարության օրենսգրքի 292-րդ հոդվածի 2-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

2019թ. ապրիլի 12  
Ստեփանակերտ  
ՀՕ-9-Ն

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի  
մարտի 27-ին

### «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Տեղական ինքնակառավարման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում և 33-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում «Սահմանադրությամբ» բառը փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Տեղական ինքնակառավարումը տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքն ու կարողությունն է, ելնելով համայնքի բնակիչների շահերից, սեփական պատասխանատվությամբ լուծելու համայնքային նշանակության հանրային հարցերը՝ Արցախի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:»:

**Հոդված 3.** Օրենքի 4-րդ հոդվածում «Համայնքն իրավաբանական անձ է» բառերը փոխարինել «Համայնքը հանրային իրավունքի իրավաբանական անձ է» բառերով:

**Հոդված 4.** Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «չորս տարի» բառերը փոխարինել «հինգ տարի» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մաս.

«1.1. Տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրվելու իրավունք ունեն ընտրության օրը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 25 տարին լրացած, տվյալ համայնքում առնվազն վերջին մեկ տարվա հաշվառում ունեցող՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր քաղաքացի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքով նախատեսված այլ անձինք:»:

**Հոդված 5.** Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը և 25-րդ հոդվածը:

**Հոդված 6.** Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում, 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում, 53-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերում, 54-րդ հոդվածի 2-րդ մասում և 64-րդ հոդվածի 1-ին մասում «քառամյա» բառը փոխարինել «հնգամյա» բառով:

**Հոդված 7.** Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերում, 17-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետում և 2-րդ մասում, 32-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետում, 46-րդ հոդվածի 1-ին մասում, 71-րդ հոդվածի 2-րդ մասում և 72-րդ հոդվածի 1-ին մասում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրություն» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով, փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրություն» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով:

**Հոդված 8.** Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասում «վարչապետը» բառը փոխարինել «կառավարությունը» բառով:

**Հոդված 9.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

2019թ. ապրիլի 12  
Ստեփանակերտ  
ՀՕ-10-Ն

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի  
մարտի 27-ին

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2014 թվականի հոկտեմբերի 29-ի ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1-ին հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Արցախի Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:».

2) 3-րդ մասում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

**Հոդված 2.** Օրենսգրքի 2-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 2. Ընդհանուր ընտրական իրավունքը».**

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ընտրելու և ընտրվելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք:»:

**Հոդված 3.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին հոդվածով.

#### **«Հոդված 3.1. Ազատ ընտրական իրավունքը**

1. Ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության և կամավորության սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի (կուսակցության) օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին:»:

**Հոդված 4.** Օրենսգրքի 130-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «23 տարին» բառերը փոխարինել «25 տարին» բառերով.

2) 2-րդ մասում «21 տարին» բառերը փոխարինել «25 տարին» բառերով:

**Հոդված 5.** Օրենսգրքի 145-րդ հոդվածում լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին մաս.

«4.1. Ռազմական դրության ժամանակ ընտրություններ չանցկացվելու դեպքում կիրառվում են սույն հոդվածի 4-րդ մասի դրույթները:»:

**Հոդված 6.** Օրենսգրքի 146-րդ հոդվածում՝

- 1) վերնագրում «դրույթներ» բառը փոխարինել «դրույթ» բառով.
- 2) ուժը կորցրած ճանաչել 2-րդ մասը:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ 6-րդ հոդվածի, որն ուժի մեջ է մտնում 2019 թվականի օգոստոսի 1-ին:

**ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

2019թ. ապրիլի 12  
Ստեփանակերտ  
ՀՕ-11-Ն



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**

Ընդունված է 2019 թվականի  
մարտի 27-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության 2002 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-205 օրենքի (այսուհետ՝  
Օրենք) 11-րդ հոդվածի 6-րդ պարբերությունը շարադրել հետևյալ  
խմբագրությամբ.

«Եռամյա ծրագիրը հաստատվում է օրենքով»:

**Հոդված 2.** Օրենքի ամբողջ տեքստում, բացառությամբ 23-րդ հոդվածի,  
«Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական  
հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

2019թ. ապրիլի 12  
Ստեփանակերտ  
ՀՕ-12-Ն

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի  
մարտի 27-ին

### «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ազգային անվտանգության մարմինների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2003 թվականի նոյեմբերի 26-ի ՀՕ-75 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

#### «Հոդված 3. Ազգային անվտանգության մարմինների համակարգը

Ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ՝ լիազորված մարմին) Արցախի Հանրապետության նախագահին ենթակա մարմին է: Արցախի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների համակարգը կազմված է լիազորված մարմնից, նրան ենթակա՝ կենտրոնական և քաղաքային (շրջանային) կառուցվածքային ստորաբաժանումներից:»:

**Հոդված 2.** Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

#### «Հոդված 4. Լիազորված մարմինը

Լիազորված մարմնի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Արցախի Հանրապետության նախագահը (այսուհետ՝ Հանրապետության նախագահ), իսկ անմիջական ղեկավարումը՝ լիազորված մարմնի ղեկավարը:

Լիազորված մարմնի համակարգում սահմանված կարգով գործում են հետախուզական, հակահետախուզական, ռազմական հակահետախուզական և քննչական մարմիններ:

Լիազորված մարմինը Արցախի Հանրապետության տարածքում իրականացնում է ազգային անվտանգության խնդիրներին առնչվող հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների և ստորաբաժանումների աշխատանքի օպերատիվ ղեկավարումը:

Լիազորված մարմնի կառուցվածքը սահմանվում է՝ ելնելով սույն օրենքից:»:

**Հոդված 3.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին և 4.2-րդ հոդվածներով.

**«Հոդված 4.1. Լիազորված մարմնի ղեկավարի ու նրա տեղակալների նշանակումը և ազատումը**

Լիազորված մարմնի ղեկավարին (Ազգային անվտանգության ծառայության տնօրեն), պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հանրապետության նախագահը:

Լիազորված մարմնի ղեկավարի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հանրապետության նախագահը լիազորված մարմնի ղեկավարի ներկայացմամբ:

#### **Հոդված 4.2. Քննչական մարմինը**

Քննչական մարմինը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում է նախաքննություն:

Քննչական մարմնին՝ հատուկ կարևոր գործերով ավագ քննիչին, նշանակում և ազատում է լիազորված մարմնի ղեկավարը:»:

**Հոդված 4.** Օրենքի 5-րդ հոդվածում «գերատեսչական» բառը փոխարինել «ենթաօրենսդրական» բառով:

**Հոդված 5.** Օրենքի 10-րդ հոդվածի երրորդ, 11-րդ հոդվածի չորրորդ և 24-րդ հոդվածի երրորդ պարբերություններից հանել «գերատեսչական նորմատիվ» բառերը:

**Հոդված 6.** Օրենքի 12-րդ հոդվածում «ներքին գործերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտակարգ իրավիճակների վարչության քաղաքացիական պաշտպանության գործառնություն և այլ» բառերը փոխարինել «գործերում, այլ գործերում և» բառերով:

**Հոդված 7.** Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) երրորդ պարբերության «գերատեսչական» բառը փոխարինել «ենթաօրենսդրական» բառով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Ազգային անվտանգության մարմիններն օրենքով իրենց իրավասությանը հանձնված գործերով իրականացնում են դեպքի վայրի պահպանություն, որի կանոնները սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:»:

**Հոդված 8.** Օրենքի 3-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»:**

**Հոդված 9.** Օրենքի 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

## **«Հոդված 15. Ազգային անվտանգության մարմինների լիազորությունները**

Ազգային անվտանգության մարմինները՝

1) իրենց իրավասության սահմաններում ապահովում են Արցախի Հանրապետության ինքնիշխանությունը, պետական սահմանների անձեռնմխելիությունը, տարածքային ամբողջականությունը, սահմանադրական կարգը, քաղաքացիների իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, ամրապնդում են հանրապետության պաշտպանունակությունը.

2) գաղտնի հիմունքներով համագործակցում են դրա համար համաձայնություն տված անձանց հետ.

3) օրենքով սահմանված կարգով իրականացնում են հետաքննություն, նախաքննություն և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ունեն և օգտագործում են ձերբակալվածներին պահելու վայր.

4) ներթափանցում են հետախուզական և այլ գործունեություն իրականացնող օտարերկրյա պետությունների հատուկ ծառայություններ ու կազմակերպություններ, ինչպես նաև հանցավոր խմբավորումներ, որոնց գործունեությունը կարող է վնասել Արցախի Հանրապետության ազգային անվտանգությանը.

5) օրենքով սահմանված կարգով տեղեկատվական անվտանգության ոլորտում իրականացնում են պետական վերահսկողություն, ինչպես նաև համակարգում են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ պաշտպանվող տեղեկատվության գաղտնագրային և տեխնիկական պաշտպանության բնագավառի գործունեությունը, սահմանում են Արցախի Հանրապետությունում տեխնիկական հետախուզություններին հակազդման կազմակերպման միասնական կարգը.

6) ծառայողական պարտականությունները կատարելիս օգտագործում են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պատկանող կապի և դրա հայտնաբերման միջոցները, իսկ անհետաձգելի դեպքերում՝ նաև կազմակերպություններին ու ֆիզիկական անձանց պատկանող կապի և դրա հայտնաբերման միջոցները՝ համարժեք հատուցմամբ.

7) հանցագործությունների կանխարգելման, հանցագործություն կատարած կամ դրանց կատարման մեջ կասկածվող անձանց հետապնդելու և ձերբակալելու, շտապ բժշկական օգնության կարիք ունեցող ֆիզիկական անձանց բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններ հասցնելու, ինչպես նաև դեպքի վայր մեկնելու համար անհետաձգելի դեպքերում օգտագործում են ֆիզիկական անձանց և կազմակերպություններին պատկանող տրանսպորտային միջոցները: Ազգային անվտանգության մարմինները, օրենքով սահմանված կարգով, պարտավոր են հատուցել նրանց ծախսերը կամ պատճառած վնասը.

8) հանցագործության կատարման մեջ կասկածվող անձանց հետապնդելիս օրենքով սահմանված կարգով մուտք են գործում ֆիզիկական անձանց պատկանող բնակելի և այլ շինություններ, հողամասեր, կազմակերպությունների շինություններ, եթե բավարար տվյալներ կան ենթադրելու, որ այնտեղ հանցագործություն է կատարվում կամ կատարվել է,

և հապաղումը կարող է վտանգի տակ դնել քաղաքացիների կյանքն ու առողջությունը.

9) ստուգում են ֆիզիկական անձանց և պաշտոնատար անձանց՝ անձը հաստատող փաստաթղթերը, եթե հանցագործության կատարման մեջ նրանց կասկածելու համար բավարար հիմքեր կան.

10) ձերբակալում են այն անձանց, որոնք ներթափանցել են կամ ներթափանցելու փորձ են կատարել հատուկ ռեժիմային օբյեկտների և պահպանվող այլ օբյեկտների հսկվող տարածքներ, ինչպես նաև ստուգում են նրանց անձը հաստատող փաստաթղթերը, նրանցից ստանում են բացատրություններ, կատարում են այդ անձանց զննում, նրանց իրերի ու փաստաթղթերի զննում և առգրավում.

11) սահմանված կարգով պետական մարմիններ և կազմակերպություններ են ներկայացնում առաջարկություններ կամ միջնորդություններ անվտանգության սպառնալիքների և այն հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների վերացման մասին, որոնց բացահայտումը, կանխումն ու խափանումը վերապահված են լիազորված մարմնի իրավասությանը.

12) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից օրենքով սահմանված կարգով ստանում են տեղեկություններ (այդ թվում՝ առցանց), որոնք անհրաժեշտ են ազգային անվտանգության մարմինների վրա դրված պարտականությունների կատարման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ տեղեկությունների ստացման հատուկ կարգ է սահմանված.

13) Արցախի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների գործունեության համակարգման և արդյունքների ամփոփման համար ունեն տեղեկատվական համակարգեր, վերլուծության, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական նպատակներով տեսագրման, ձայնագրման, կինոնկարահանման, լուսանկարահանման և տեխնիկական կենտրոններ.

14) անցկացնում են քրեագիտական և այլ փորձաքննություններ ու հետազոտություններ.

15) ազգային անվտանգության մարմինների իրավասության սահմաններում, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերի, ոլորտային համագործակցությունը կանոնակարգող փաստաթղթերի, իսկ բացառիկ դեպքերում՝ փոխադարձության հիման վրա, համագործակցում են օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և իրավապահ մարմինների հետ ու սահմանված կարգով, փոխգործակցության հիման վրա, նրանց հետ փոխանակում են օպերատիվ տեղեկություններ, հատուկ տեխնիկական և այլ միջոցներ.

16) իրենց իրավասության սահմաններում օրենքով սահմանված կարգով մասնակցում են Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերի նախագծերի մշակմանը և կնքում քաղաքացիաիրավական պայմանագրեր.

17) իրականացնում են միջոցառումներ՝ ուղղված սեփական անվտանգության ապահովմանը (այդ թվում՝ լիազորված մարմնի համակարգում օտարերկրյա պետությունների տեխնիկական հետախուզության միջոցներին հակազդելը), ազգային անվտանգության մարմինների պետական և

ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանմանը, օգտագործում են տեխնիկական միջոցներ՝ օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և կազմակերպությունների, հանցավոր խմբերի և առանձին անձանց ներթափանցման կանխման ու խափանման նպատակով.

18) ազգային անվտանգության մարմինների աշխատակիցների, ազգային անվտանգության մարմինների ստորաբաժանումների, շինությունների և տրանսպորտային միջոցների քողարկման նպատակով օգտագործում են պետական մարմինների և կազմակերպությունների փաստաթղթերը, այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են քողարկման համար.

19) անցկացնում են Արցախի Հանրապետության ազգային անվտանգության հիմնահարցերի գիտական հետազոտություններ.

20) պայմանագրային հիմունքներով օգտվում են ֆիզիկական անձանց և կազմակերպությունների բնակելի և այլ շինություններից.

21) կադրերի մասնագիտական նախապատրաստության նպատակով, օրենքով սահմանված կարգով, ունեն համապատասխան ուսումնական հաստատություններ.

22) հատուցմամբ կամ անհատույց իրականացնում են կադրերի պատրաստում օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների, կազմակերպությունների անվտանգության ծառայությունների համար, եթե դա չի հակասում ազգային անվտանգության մարմինների գործունեության սկզբունքներին.

23) Հանրապետության նախագահին և նրա հանձնարարությամբ այլ պետական մարմիններ և կազմակերպություններ տեղեկատվություն են ներկայացնում Արցախի Հանրապետության ազգային անվտանգությանն առնչվող հարցերի մասին.

24) բացահայտում, կանխում և խափանում են Արցախի Հանրապետության անվտանգության դեմ ուղղված՝ օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական և այլ քայքայիչ գործունեությունը.

25) հետախուզական տեղեկություններ են հավաքում Արցախի Հանրապետության անվտանգության ապահովման, նրա տնտեսական, գիտատեխնիկական և պաշտպանական ներուժի հզորացման, պետության անվտանգության ամրապնդման նպատակով.

26) բացահայտում, կանխում և խափանում են իրենց քննչական ենթակայությանը վերապահված, ինչպես նաև օրենքով նախատեսված իրենց լիազորությունների կատարման ընթացքում հայտնի դարձած այլ հանցագործությունները, իրականացնում են այդ հանցագործությունները կատարած կամ դրանց կատարման մեջ կասկածվող անձանց հետախուզումը.

27) բացահայտում, կանխում և խափանում են սահաբեկչական գործողությունները.

28) մշակում և պետական համապատասխան մարմինների հետ համատեղ իրականացնում են միջոցառումներ՝ ուղղված պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն երևույթների, օտարերկրյա պետությունների հետ կապված՝ զենքի և թմրանյութերի ապօրինի շրջանառության, դրանց մաքսանենգության, հանցավոր ճանապարհով ստացված գույքն օրինականացնելու, զինված կազմավորումների, հանցավոր խմբերի, Արցախի Հանրապետության սահմանադրական

կարգը բռնությամբ տապալելու նպատակ ունեցող անձանց և կազմակերպությունների դեմ պայքարին.

29) իրենց իրավասության սահմաններում ապահովում են անվտանգությունը Արցախի Հանրապետության պետական մարմիններում և հիմնարկներում, Արցախի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում.

30) իրենց իրավասության սահմաններում ապահովում են Արցախի Հանրապետության ռազմաարդյունաբերական համալիրի, տրանսպորտի և կապի, էլեկտրիկայի, ֆինանսների և արդյունաբերության, ռազմավարական (ստրատեգիական) օբյեկտների, ինչպես նաև առաջնային գիտական մշակումների ոլորտների անվտանգությունը.

31) մասնակցում են պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանության վերաբերյալ միջոցառումների մշակմանը և իրականացմանը, վերահսկում են պետական մարմիններում, զինվորական կազմավորումներում, կազմակերպություններում պետական և ծառայողական գաղտնիքի պահպանումը, սահմանված կարգով իրականացնում են միջոցառումներ՝ կապված քաղաքացիներին պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններին առնչվելու թույլտվության հետ.

32) անցկացնում են միջոցառումներ՝ ուղղված Արցախի Հանրապետության սահմաններից դուրս նրա կազմակերպությունների և քաղաքացիների անվտանգության ապահովմանը.

33) Արցախի Հանրապետության տարածքում ապահովում են օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների անվտանգությունը.

34) իրենց իրավասության սահմաններում, իրավասու պետական մարմինների հետ համատեղ, մասնակցում են Արցախի Հանրապետության տարածքում անցկացվող հավաքների և հանրային միջոցառումների անվտանգության ապահովմանը.

35) ռադիոհսկողության ճանապարհով իրականացնում են հաղորդող ռադիոէլեկտրոնային միջոցների, ռադիոտվյալների և ռադիոառաքումների գրանցումն ու կենտրոնացված հաշվառումը, բացահայտում են Արցախի Հանրապետության ազգային անվտանգությանն սպառնացող կամ հակաիրավական նպատակներով օգտագործվող ռադիոէլեկտրոնային միջոցների ռադիոառաքումները և ռադիոալիքները.

36) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան մասնակցում են Արցախի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելուն և դադարեցնելուն, Արցախի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից Արցախի Հանրապետության տարածք մուտք գործելուն ու տարածքից դուրս գալուն, ինչպես նաև օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց՝ Արցախի Հանրապետությունում գտնվելու ռեժիմին վերաբերող հարցերի լուծմանը.

37) պահպանում են Արցախի Հանրապետության ազգային անվտանգության մարմինների մոբիլիզացիոն պատրաստվածությունը.

38) մասնակցում են Արցախի Հանրապետության տեղեկատվական-հեռահաղորդակցական համակարգերում պետական տեղեկատվական պաշարների պաշտպանության, տեղեկատվության գաղտնագրային և

տեխնիկական պաշտպանության, տեխնիկական հետախուզություններին հակազդման բնագավառներում պետական քաղաքականության մշակմանը և իրացնում են դա.

39) Հանրապետության նախագահին, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց ապահովում են կառավարական կապով և հատուկ կապի այլ տեսակներով.

40) իրականացնում են ազգային անվտանգության մարմինների համար կադրերի պատրաստումը, նրանց վերապատրաստումը և որակավորման բարձրացումը.

41) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացնում են Արցախի Հանրապետության պետական սահմանի պահպանությունը.

42) կազմակերպում և իրականացնում են հակահետախուզական գործունեություն, որոշում են հակահետախուզական միջոցառումների անցկացման և դրանք իրականացնելիս գաղտնի մեթոդների ու միջոցների օգտագործման կարգը, ինչպես նաև սահմանում են ազգային անվտանգության մարմինների կողմից օտարերկրյա պետությունների հատուկ ծառայություններ և կազմակերպություններ ներթափանցելու կարգը.

43) աջակցում են Արցախի Հանրապետության զինված ուժերի և այլ զինվորական կազմավորումների, ինչպես նաև դրանց կառավարման մարմինների մարտունակության և մարտական պատրաստության պահպանմանն ու ամրապնդմանը.

44) ստանում, մշակում և վերլուծում են Արցախի Հանրապետության անվտանգությանն սպառնացող վտանգի մասին տեղեկատվությունը, կանխատեսում են դրա վտանգը.

45) օրենքով սահմանված կարգով ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ մասնակցում են իրականացվող միջոցառումներին.

46) սահմանում են ազգային անվտանգության մարմիններում իսկական և պայմանական անվանումների կիրառման և շնորհման կարգը.

47) օրենքով սահմանված կարգով սահմանում են հատուկ նշանակության հողերի օգտագործման սահմանափակումներ և նորմեր, մշակում և ներկայացնում են առաջարկություններ՝ հատուկ նշանակության հողերի օգտագործման կարգի, պաշտպանական գոտիների, հատուկ կարգավորման դրոյթների, քաղաքաշինական գործունեություն ծավալելու կարգի վերաբերյալ.

48) իրենց իրավասության սահմաններում հրապարակում են ազգային անվտանգության ապահովման հարցերի վերաբերյալ ակտեր ու հետևում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից դրանց կատարմանը.

49) ազգային անվտանգության մարմինների պաշտոնական ներկայացուցիչներին գործուղում են օտարերկրյա պետություններ՝ այդ պետությունների հատուկ ծառայությունների կամ իրավասու մարմինների համաձայնությամբ միջազգային բնույթի հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության բարձրացման նպատակով.

50) Հանրապետության նախագահին ու նրա հանձնարարությամբ պետական կառավարման համակարգի և տարածքային կառավարման



մարմիններին իրազեկում են Արցախի Հանրապետության անվտանգությանն սպառնացող վտանգի մասին.

51) ապահովում են Արցախի Հանրապետության տնտեսական անվտանգությունը և իրենց իրավասության սահմաններում պայքարում են տնտեսական հանցագործությունների դեմ.

52) ռադիոհաճախականությունների բաշխումը և նշանակումը տնօրինող կազմակերպություններից ստանում են ռադիոհաճախականությունների տիրույթներ, ինչպես նաև վարձակալում են Արցախի Հանրապետության համապատասխան կազմակերպություններից կապի գծերն ու կապուղիները՝ Արցախի Հանրապետությունում և նրա տարածքից դուրս կառավարական կապի ու հատուկ կապի այլ տեսակների բացառիկ օգտագործման համար.

53) ապահովում են Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, պետական նախարարի, նախարարությունների, տարածքային կառավարման մարմինների, Բարձրագույն դատական խորհրդի, դատարանների, դատախազության, պետական այլ մարմինների, Արցախի Հանրապետության տարածքում տեղակայված գործուսերի (բացառությամբ Արցախի Հանրապետության պաշտպանության նախարարության գործուսերի), ինչպես նաև Արցախի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, օտարերկրյա պետություններում Արցախի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների փոստատարային օպերատիվ կապը (բացառությամբ դիվանագիտական փոստի).

54) փոխադրում են պետական և դիվանագիտական մարմինների հատուկ կարևորության, հույժ գաղտնի, գաղտնի և այլ ծառայողական թղթակցությունները, ապահովում են դրանց պահպանումը.

55) լիազորված մարմնում գործունեության համակարգման և արդյունքների ամփոփման համար ստեղծում են կապի, տեղեկատվական և տվյալների փոխանցման համակարգեր, տեղեկատվության պաշտպանության միջոցներ (այդ թվում՝ նաև կրիպտոգրաֆիկական պաշտպանության միջոցներ), Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան սահմանում են լիազորված մարմնի գործունեությանը վերաբերող օպերատիվ, արխիվային և այլ նյութերի հաշվառման, պահպանման ու օգտագործման կարգը.

56) իրենց իրավասության սահմաններում ընդհանրացնում են Արցախի Հանրապետության օրենսդրության կիրառման պրակտիկան, դրա կատարելագործման վերաբերյալ սահմանված կարգով առաջարկություններ ներկայացնում Հանրապետության նախագահին, մասնակցում են համապատասխան նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակմանը, իրենց գործունեության իրավական ապահովումը կազմակերպելիս իրականացնում են ազգային անվտանգության մարմինների մեթոդական ղեկավարումը.

57) Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան սահմանում են լիազորված մարմնում գործավարության և արխիվային գործի կազմակերպման միասնական պահանջները.

58) մամուլում և զանգվածային լրատվության մյուս միջոցներով կազմակերպում են ազգային անվտանգության մարմինների գործունեությանը վերաբերող հրապարակումներ և հաղորդումներ.

59) պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, օտարերկրյա պետություններում Արցախի Հանրապետության ներկայացուցչություններում կազմակերպում, իրականացնում և վերահսկում են տեխնիկական հետախուզություններին հակազդման հատուկ միջոցառումներ, Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում են տեղեկատվական տեխնոլոգիաների, տեղեկատվական-հեռահաղորդակցական համակարգերի ներդրման, ծրագրային ուղեկցման, պաշտպանական միջոցների փորձաքննության իրականացումը.

60) հանցավոր ոտնձգություններից ապահովում են ազգային անվտանգության մարմինների զինծառայողների և քաղաքացիական անձնակազմի, այդ մարմիններին աջակցող անձանց ազգային անվտանգության մարմինների քննչական ենթակայությանը վերապահված գործերով քրեական դատավարության մասնակիցների, նրանց ընտանիքների անդամների և հարազատների կյանքի, առողջության, պատվի և արժանապատվության, ինչպես նաև գույքի պաշտպանությունը.

61) կազմակերպում են քաղաքացիների ընդունելությունը, իրենց իրավասության սահմաններում քննարկում նրանց հանրագրերը, դիմումները և բողոքները.

62) սահմանված կարգով պատրաստում են օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների պաշտոնատար անձանց, հաստիքային գաղտնի աշխատողներին և այդ մարմինների հետ գաղտնի հիմունքներով համագործակցող անձանց, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից ստեղծված կազմակերպությունները, հիմնարկները, շահագործվող շինությունները, հատուկ տեխնիկական և տրանսպորտային միջոցները քողարկող փաստաթղթերը.

63) մասնակցում են սպառազինության և հատուկ տեխնիկայի, ստեղծվող սպառազինությանն ու հատուկ տեխնիկային ներկայացվող տեխնիկական պահանջների մշակմանը, իրականացնում են սպառազինության և հատուկ տեխնիկայի կուտակման, պահպանման ու վերանորոգման, ինչպես նաև դրանց մատակարարման և վերանորոգման պատվերների տեղաբաշխում.

64) ազգային անվտանգության մարմինների պարտականությունների կատարման համար սահմանված կարգով ունեն հատուկ ստորաբաժանումներ:»:

**Հոդված 10.** Օրենքի 16-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 11.** Օրենքի 18-րդ հոդվածում՝

1) երկրորդ պարբերության «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև լիազորված մարմնի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մյուս նախարարությունների ու գերատեսչությունների համատեղ նորմատիվ ակտերով» բառերը փոխարինել «օրենքով» բառով.

2) 9-րդ պարբերությունը «պայմանագրերի» բառերից հետո լրացնել «ոլորտային համագործակցությունը կանոնակարգող փաստաթղթերի, իսկ բացառիկ դեպքերում՝ փոխադարձության» բառերով:

**Հոդված 12.** Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) հինգերորդ պարբերության «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «օրենքով» բառով.

2) վեցերորդ պարբերությունից հանել «գերատեսչական նորմատիվ» բառերը:

**Հոդված 13.** Օրենքի 21-րդ հոդվածում «Զինձառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» բառերը փոխարինել «Զինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» Արցախի Հանրապետության» բառերով:

**Հոդված 14.** Օրենքի 22-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում «անօրինական գործողությունները» բառերը փոխարինել «գործողությունները, անգործությունը և որոշումները» բառերով:

**Հոդված 15.** Օրենքի 23-րդ հոդվածի առաջին պարբերությունում «գերատեսչական» բառը փոխարինել «ենթաօրենսդրական» բառով:

**Հոդված 16.** Օրենքի 27-րդ հոդվածի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ազգային անվտանգության մարմինների գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հանրապետության նախագահը՝ Սահմանադրությամբ և օրենքով իրեն վերապահած լիազորությունների շրջանակներում:»:

**Հոդված 17.** Օրենքի տեքստում, բացառությամբ 19-րդ հոդվածի 6-րդ պարբերության և 21-րդ հոդվածի «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

**Հոդված 18.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Բ. ՄԱՀԱԿՑԱՆ**

2019թ. ապրիլի 12  
Ստեփանակերտ  
ՀՕ-13-Ն

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի  
մարտի 27-ին

### «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» 2003 թվականի նոյեմբերի 26-ի ՀՕ-78 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Ազգային անվտանգության մարմիններում շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողների զինվորական ծառայության անցնելու կարգը սահմանվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Արցախի Հանրապետության օրենքով»:

#### **Հոդված 2.** Օրենքի 3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում 1-ին կետի «ա» ենթակետի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության հանրապետական մարմնի ղեկավարի» բառերը փոխարինել «ազգային անվտանգության ծառայության տնօրենի» բառերով.

2) 3-րդ մասի «՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության առաջարկությամբ» բառերը հանել.

3) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Արցախի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, ինչպես նաև արտակարգ իրավիճակների պետական ծառայության հիմնական պաշտոնների միջև համապատասխանությունը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը»:

**Հոդված 3.** Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «սպայական» բառը փոխարինել «զինվորական» բառով:

**Հոդված 4.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին հոդվածով.

#### **«Հոդված 4.1. Բարձրագույն զինվորական կոչումներ շնորհելը**

Բարձրագույն զինվորական կոչումներ շնորհում է Արցախի Հանրապետության նախագահը՝ իր նախաձեռնությամբ կամ պետական լիազոր մարմնի ղեկավարի ներկայացմամբ»:

**Հոդված 5.** Օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Ձինվորական կոչման կրման ժամկետն ու դրա ոչ պակաս, քան կետը լրացած ծառայողներին որպես խրախուսանք կարող է շնորհվել զբաղեցրած պաշտոնի համար նախատեսվածից մեկ աստիճան բարձր կոչում:»:

**Հոդված 6.** Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայության գորակոչից ընտանեկան դրության բերմամբ տարկետում ստացած» բառերը փոխարինել «Ձինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետում և «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Արցախի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածում նշված և պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ պարտադիր զինվորական ծառայության գորակոչից տարկետում ստացած» բառերով.

2) 3-րդ մասի վերջակետը փոխարինել միջակետով և այն լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով.

«5) միաժամանակ հանդիսանում է այլ պետության քաղաքացի:»:

**Հոդված 7.** Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում «կազմինը» բառից հետո լրացնել «և հետախուզական ու հակահետախուզական ստորաբաժանումների՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ավագ սպայական կազմի ծառայողներինը» բառերով:

**Հոդված 8.** Օրենքի 18-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «մարմինների» բառից հետո լրացնել «գործունեության» բառը.

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Պետական լիազոր մարմնի ղեկավարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Արցախի Հանրապետության նախագահը, իսկ լիազոր մարմնի ղեկավարի տեղակալներին՝ Արցախի Հանրապետության նախագահը՝ պետական լիազոր մարմնի ղեկավարի ներկայացմամբ:»:

3) 3-րդ մասում «ղեկավարը» բառից հետո լրացնել «, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով» բառերը:

**Հոդված 9.** Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 1-ին և 2-րդ մասերի «վերջին երեք տարին» բառերը փոխարինել «առնվազն երեք տարի» բառերով.

2) 6.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.1 Պետական լիազոր մարմնում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել նաև զինված ուժերի, ոստիկանության, դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության և արդարադատության նախարարության պետական ծառայողներ, դատախազներ, քննիչներ, ինչպես նաև ազգային անվտանգության մարմինների պահեստագործի սպաներ, որոնք բավարարում են տվյալ պաշտոնին նշանակվելու համար ազգային անվտանգության մարմինների ծառայողներին ներկայացվող պահանջները:»:

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.2-րդ մաս.

«6.2. Սույն հոդվածի 6.1-ին մասով նախատեսված պետական մարմինների և ազգային անվտանգության ծառայության պաշտոնների համապատասխանությունը սահմանում է Արցախի Հանրապետության կառավարությունը:»:

**Հոդված 10.** Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասում «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» բառերը փոխարինել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» բառերով:

**Հոդված 11.** Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Հերթական արձակուրդը ծառայողի ցանկությամբ կարող է տրվել մաս-մաս, սակայն ոչ ավելի, քան երկու մասով:»:

**Հոդված 12.** Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2-րդ և 3-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) օրենքով սահմանված կարգով երկարամյա ծառայության կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու դեպքում.

3) Արցախի Հանրապետության քաղաքացիության դադարեցման՝ ինչպես նաև Արցախի Հանրապետության քաղաքացիության հետ միաժամանակ այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում:».

2) 10-րդ կետի «ոչ լրիվ համապատասխանություն» բառերը փոխարինել «անհամապատասխանություն» բառով:

**Հոդված 13.** Օրենքի 53-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 53. Ազգային անվտանգության մարմինների գործունեությանն օժանդակող անձանց խրախուսումը**

1. Ազգային անվտանգության մարմինների գործունեությանն օժանդակող անձինք կարող են խրախուսվել Հանրապետության նախագահի սահմանած կարգով և չափով:

2. Ազգային անվտանգության մարմինների գործունեությանն օժանդակող անձինք կարող են պարգևատրվել պետական պարգևներով՝ օրենքով սահմանված կարգով:»:

**Հոդված 14.** Օրենքի տեքստում, բացառությամբ 52-րդ հոդվածի, «Ազգային անվտանգության մարմինների մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Լեռնային Ղարաբաղի» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

**Հոդված 15.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

2019թ. ապրիլի 12  
Ստեփանակերտ  
ՀՕ-14-Ն

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի  
մարտի 27-ին

### «ՀԱՏՈՒԿ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2007 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-127 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում «անկախության» բառը փոխարինել «չեզոքության» բառով:

**Հոդված 2.** Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 2-րդ և 3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Պետական պահպանություն տրամադրվում է՝

1) Արցախի Հանրապետության նախագահին.

2) Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին.

3) Արցախի Հանրապետության պետական նախարարին:

Արցախի Հանրապետության նախագահը (այսուհետ՝ Հանրապետության նախագահը), Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահը և Արցախի Հանրապետության պետական նախարարն իրենց պաշտոնավարման ժամանակահատվածում իրավասու չեն հրաժարվելու պետական պահպանությունից:

3. Այլ պետական պաշտոնյաներին, հասարակական, քաղաքական, կրոնական և այլ գործիչներին, ինչպես նաև այլ անձանց կարող է պետական պահպանություն տրամադրվել Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ: Այդ անձանց պահպանությունը կարող է իրականացվել Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին, 4-րդ և 5-րդ մասեր.

«3.1. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված Կառավարության որոշումը ենթակա չէ հրապարակման:

4. Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց կողմից (բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց) վարչական զանցանք կամ հանցագործություն (հակաօրինական արարք) կատարվելու դեպքում պետական պահպանություն իրականացնող խմբի ղեկավարը պարտավոր է՝

1) հատուկ պետական պաշտպանության ենթակա անձին անհապաղ տեղեկացնել, որ պետական պահպանությունը կարող է կասեցվել այդ անձի կողմից հակաօրինական արարք կատարվելու ընթացքում.

2) անհապաղ զեկուցել Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ղեկավարին հետագա պահպանությունը իրականացնելու նպատակահարմարության վերաբերյալ:



Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված կարգով իրազեկվելուց հետո հատուկ պետական պահպանության ենթակա անձի կողմից հակաօրինական արարքը շարունակվելու դեպքում պետական պահպանություն իրականացնող խմբի ղեկավարի որոշմամբ այդ արարքի կատարման ընթացքում կարող է կասեցվել պետական պահպանությունը: Նույն կարգով իրազեկվելուց հետո վարչական զանցանք կամ հանցագործություն կրկին կատարվելու դեպքում ազգային անվտանգության ծառայության ղեկավարի որոշմամբ հատուկ պետական պահպանությունը դադարեցվում է:

5. Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված անձանց, կարող են ժամանակավորապես հրաժարվել պետական պահպանությունից՝ այդ մասին գրավոր իրազեկելով Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ղեկավարին:»:

**Հոդված 3.** Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «և (կամ)» բառերը փոխարինել «ինչպես նաև» բառերով.

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Արցախի Հանրապետության պաշտոնաթող նախագահներին տրամադրվում է անձնական ցմահ պետական պահպանություն: Արցախի Հանրապետության պաշտոնաթող նախագահները կարող են ժամանակավորապես կամ ընդմիջտ հրաժարվել պետական պահպանությունից՝ այդ մասին գրավոր իրազեկելով Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության ղեկավարին:»:

**Հոդված 4.** Օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 7. Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահի և Արցախի Հանրապետության պետական նախարարի պետական պահպանությունը**

Արցախի Հանրապետության Ազգային ժողովի նախագահին և Արցախի Հանրապետության պետական նախարարին պետական պահպանություն տրամադրվում է նրանց պաշտոնավարման ժամանակահատվածում:»:

**Հոդված 5.** Օրենքի 8-րդ հոդվածում «և 7-րդ հոդվածում» բառերը փոխարինել «, 6-րդ և 7-րդ հոդվածներում» բառերով:

**Հոդված 6.** Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «Նախագահի սահմանած կարգով և ժամկետներում» բառերից հետո լրացնել «, որը ենթակա չէ հրապարակման» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Այդ անձանց պահպանությունը կարող է իրականացվել Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով:»:

**Հոդված 7.** Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 2-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերում «հանրապետական մարմնի» բառերը փոխարինել «ծառայության» բառով.

2) 8-րդ մասում «օրենսդրությամբ» բառը փոխարինել «օրենքով» բառով:

**Հոդված 8.** Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 8-րդ կետի երկրորդ պարբերությունը «հակառակ» բառից հետո լրացնել «՝ զուգորդվելով այդ անձանց ազատությունից զրկելով» բառերով.

2) 15-րդ կետից հանել «և կնքել միջգերատեսչական պայմանագրեր» բառերը:

**Հոդված 9.** Օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «և կամ» բառերը փոխարինել «կամ» բառով:

**Հոդված 10.** Օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 11.** Օրենքի տեքստում «Լեոնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

**Հոդված 12.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

2019թ. ապրիլի 12  
Ստեփանակերտ  
ՀՕ-15-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի  
մարտի 27-ին

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության 2004 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-104 օրենքի 13-րդ  
հոդվածի աղյուսակի 8-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ  
խմբագրությամբ.

«

բ) Արցախի Հանրապետություն մեկ անգամվա (մինչև քսանմեկ օր) մուտքի զբոսաշրջիկային արտոնագիր տալու համար	0
---	---

»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական  
հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2019թ. ապրիլի 12  
Ստեփանակերտ  
ՀՕ-16-Ն

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի  
մարտի 27-ին

### «ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՑԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-133 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 13.3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

#### «Հոդված 13.3. Ռոյալթիի հաշվարկման բազան

1. Ռոյալթիի հաշվարկման բազա է համարվում հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված խտանյութի, խտանյութի փոխարեն կամ առանց խտանյութի ստացման ձուլվածքի կամ ընդերքօգտագործման թափոնների, հանքաքարի, խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի (այսուհետ՝ խտանյութի հետ միասին՝ արտադրանք) իրացման շրջանառությունը:

2. Ռոյալթիի հաշվարկման համար իրացման շրջանառությունը որոշվում է հաշվեգրման եղանակով:

3. Ռոյալթի վճարողների կողմից խտանյութի իրացման շրջանառությունը հաշվարկվում է հետևյալ կարգով.

1) մատակարարված խտանյութի ֆիզիկական ծավալ է համարվում մատակարարի և գնորդի միջև կնքված՝ մատակարարման պայմանագրին համապատասխան որոշված (պայմանագրին համապատասխան կատարվող վերջնահաշվարկի արդյունքներով) մատակարարված խտանյութում մետաղների վերջնական պարունակությունը՝ արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով): Եթե մատակարարման պայմանագրին համապատասխան խտանյութի մատակարարումը և վերջնահաշվարկը կատարվում են ռոյալթիի հաշվարկման տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում, ապա խտանյութի մատակարարման հաշվետու ժամանակաշրջանում իրացման շրջանառության հաշվարկման համար որպես ֆիզիկական ծավալ հիմք է ընդունվում մատակարարման պահին պայմանագրով գործող պայմաններով (ըստ մատակարարի կողմից տրվող որակի նախնական հավաստագրերի և հաշվարկային փաստաթղթերի) մետաղների պարունակությունը՝ արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով):

2) որպես մատակարարված խտանյութի ֆիզիկական ծավալի գին հիմք է ընդունվում մատակարարված խտանյութի համար մատակարարի և գնորդի միջև կնքված՝ խտանյութի մատակարարման պայմանագրին համապատասխան ըստ գնորդման ժամանակահատվածի և գնանշումների (պայմանագրին համապատասխան կատարվող վերջնահաշվարկի

արդյունքներով) որոշված պայմանագրի գինը: Եթե խտանյութի մատակարարման պայմանագրին համապատասխան խտանյութի մատակարարումը և վերջնահաշվարկը կատարվում են ռոյալթիի հաշվարկման տարբեր հաշվետու ժամանակաշրջաններում, ապա խտանյութի մատակարարման հաշվետու ժամանակաշրջանում իրացման շրջանառության հաշվարկման համար, որպես ֆիզիկական ծավալի գին, հիմք է ընդունվում մատակարարման պահին պայմանագրով գործող պայմաններով որոշված պայմանագրի գինը՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3) ռոյալթիի հաշվարկման հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված (անկախ մատակարարման պայմաններից) խտանյութի իրացման շրջանառություն է համարվում հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ֆիզիկական ծավալի համար մատակարարի և գնորդի միջև կնքված արտադրանքի մատակարարման պայմանագրով որոշված (պայմանագրին համապատասխան կատարվող վերջնահաշվարկի արդյունքներով) պայմանագրի գինը՝ հիմք ընդունելով հետևյալը.

ա. ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի մատակարարման պայմանագրի վերջնահաշվարկի արդյունքներով որոշված ֆիզիկական ծավալից մատակարարման պահին որոշված ծավալի բացասական շեղման առավելագույն չափ է համարվում մատակարարման պահին որոշված ծավալի 2 տոկոսը,

բ. ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս խտանյութի առանձին տեսակների համար վճարվող մետաղներ են համարվում՝

պղնձի խտանյութերի դեպքում՝ պղինձը, ոսկին, արծաթը, ինչպես նաև խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող այլ մետաղներ,

մոլիբդենի խտանյութի դեպքում՝ մոլիբդենը, ինչպես նաև խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող այլ մետաղներ,

ցինկի խտանյութի դեպքում՝ ցինկը, ոսկին, արծաթը, ինչպես նաև խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող այլ մետաղներ,

այլ խտանյութերի դեպքում՝ խտանյութի վաճառքի պայմանագրի համաձայն վճարվող մետաղները,

գ. ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի իրացման շրջանառությունը որոշելիս Արցախի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել՝

վճարվող մետաղների համար գնորդի կողմից չվճարվող (նվազեցումների ենթակա) մասի առավելագույն սահմանաչափերը: Արցախի Հանրապետության կառավարության կողմից սահմանված չլինելու դեպքում դրանք ընդունվում են պայմանագրով սահմանված չափով,

մատակարարման պայմանագրով որոշված՝ վերամշակման, գտման կամ այլ համանման ծախսերի (ներառյալ՝ տրանսպորտային) առավելագույն սահմանաչափերը: Սահմանաչափերը հրապարակվում են՝ հիմնվելով մասնագիտացված միջազգային պարբերականների, այդ թվում՝ Վուդ Մակենզի (Wood Mackenzie), Մետալ Բյուլետին (Metal Bulletin) կամ համանման հեղինակությամբ միջազգային այլ պարբերականների կողմից մետաղական խտանյութերի վերամշակման և գտման ծախսերի վերաբերյալ հրապարակվող տվյալների վրա՝ հղում կատարելով համապատասխան աղբյուրին: Արցախի Հանրապետության կառավարության կողմից

սահմանված չլինելու դեպքում դրանք ընդունվում են պայմանագրով սահմանված չափով,

դ. ռոյալթիի հաշվարկման իմաստով խտանյութի մատակարարման պահին կամ դրանից հետո արձանագրված՝ պայմանագրով նախատեսված ցուցանիշներից ավելի շեղումներով պայմանավորված իրացման շրջանառության նվազեցումները (այդ թվում՝ մատակարարված խտանյութում տեխնոլոգիական բարդություններ առաջացնող քիմիական տարրերի (տուգանային տարրերի) համար պայմանագրով նախատեսված չափից ավելի գների նվազեցումները, խոնավության համար պայմանագրով նախատեսված թույլատրելի ցուցանիշի խախտման դեպքում պայմանագրի գնի նվազեցումները) հաշվի չեն առնվում,

ե. եթե ռոյալթիի հաշվետու ժամանակաշրջանը ներառող յուրաքանչյուր ամսվա արդյունքներով ռոյալթիի իրացման շրջանառությունը 20 տոկոս կամ ավելի չափով ցածր է նույն ամսվա ընթացքում մատակարարված խտանյութում՝ սույն օրենքով կամ մատակարարման պայմանագրով վճարվող հանդիսացող մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների՝ տվյալ ամսվա միջազգային գների հիման վրա հաշվարկված իրացման շրջանառությունից, ապա այդ ամսվա համար իրացման շրջանառություն է համարվում մատակարարված խտանյութում՝ սույն օրենքով կամ մատակարարման պայմանագրով վճարվող հանդիսացող մետաղների վերջնական պարունակության և նույն մետաղների՝ տվյալ ամսվա միջազգային միջին գների 80 տոկոսի արտադրյալը,

զ. խտանյութի մատակարարման պայմանագրերով նախատեսված՝ ռոյալթիի հաշվարկման բազայի վերջնահաշվարկների արդյունքում ճշտումները կատարվում են, և դրանց արդյունքներն արտացոլվում են վերջնահաշվարկն ընդգրկող հաշվետու ժամանակաշրջանում (արտացոլվում են այդ հաշվետու ժամանակաշրջանի ռոյալթիների հաշվարկ-հաշվետվություններում):

4. Ռոյալթի վճարողի կողմից ձուլվածքի իրացման շրջանառությունը հաշվարկվում է հետևյալ կարգով.

1) ձուլվածքի ֆիզիկական ծավալ է համարվում մատակարարի և գնորդի միջև կնքված ձուլվածքի մատակարարման պայմանագրին համապատասխան հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ձուլվածքի կշիռը՝ արտահայտված գրամներով կամ տոննաներով.

2) հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված ձուլվածքի համար օգտագործված խտանյութի հաշվարկային մեծություն (խտանյութի ֆիզիկական ծավալ) է համարվում ձուլվածքի կշռի միավորի արտադրության համար փաստացի օգտագործված՝ տեխնոլոգիապես հիմնավորված խտանյութի ֆիզիկական ծավալը՝ խտանյութում մետաղների վերջնական պարունակությունն արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով).

3) ձուլվածքի իրացման շրջանառությունը հաշվարկվում է՝ ելնելով մատակարարված ձուլվածքին համապատասխան օգտագործված խտանյութի ֆիզիկական ծավալից, կիրառելով խտանյութում պարունակվող մետաղների միջազգային միջին գները:

5. Ռոյալթի վճարողի կողմից խտանյութի, ձուլվածքի վերամշակման արդյունքում ստացված ցանկացած վերջնական արտադրանքի իրացման շրջանառությունը հաշվարկվում է հետևյալ կարգով.

1) վերջնական արտադրանքի ֆիզիկական ծավալ է համարվում մատակարարի և գնորդի միջև կնքված՝ արտադրանքի մատակարարման պայմանագրին համապատասխան մատակարարված արտադրանքի արտադրության համար ծախսված բոլոր մետաղների կշիռը՝ արտահայտված գրամներով կամ տոննաներով.

2) վերջնական արտադրանքում յուրաքանչյուր մետաղի համար ռոյալթիի հաշվարկման իմաստով հիմք է ընդունվում տվյալ մետաղի խտանյութի ֆիզիկական ծավալի (խտանյութում մետաղների վերջնական պարունակությունն արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով) տեխնոլոգիապես հիմնավորված այն հաշվարկային մեծությունը, որը ծախսվել է հաշվետու ժամանակաշրջանում մատակարարված արտադրանքում պարունակվող տվյալ ծավալի մետաղի ստացման համար.

3) վերջնական արտադրանքի իրացման շրջանառությունը հաշվարկվում է՝ ելնելով մատակարարված վերջնական արտադրանքին համապատասխան օգտագործված խտանյութի ֆիզիկական ծավալից, կիրառելով խտանյութում պարունակվող մետաղների միջազգային միջին գները:

6. Իրացման շրջանառության որոշման նպատակով, առանց խտանյութի ստացման հանքաքարի վերամշակումից հետո ստացվող ցանկացած արտադրանքի ֆիզիկական ծավալ է համարվում դրանում պարունակվող մետաղի փաստացի քանակությունը՝ գրամներով կամ տոննաներով: Սույն կետով սահմանված արտադրանքի օտարման դեպքում իրացման շրջանառությունը հաշվարկվում է՝ ելնելով մետաղների վերջնական պարունակությունից (արտահայտված կշռով (գրամներով կամ տոննաներով), կիրառելով մետաղների միջազգային միջին գները:

7. Սույն օրենքի կիրառության իմաստով՝ մետաղի միջազգային միջին գին է համարվում ֆինանսների բնագավառում Արցախի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կողմից Լոնդոնի մետաղների բորսայի, իսկ նշված աղբյուրի կողմից որևէ մետաղի վերաբերյալ տվյալներ չհրապարակվելու դեպքում՝ համանման միջազգային այլ հեղինակավոր աղբյուրի տվյալների հիման վրա յուրաքանչյուր ամսվա համար հրապարակված գինը (հրապարակելով նաև աղբյուրի վերաբերյալ տեղեկությունները):»:

**Հոդված 2.** Օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ կետի երրորդ պարբերությունը հանել:

### **Հոդված 3.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ սույն օրենքի 1-ին հոդվածը՝ Օրենքի 13.3-րդ հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի «ե» պարբերությանը վերաբերող մասով, և 2-րդ հոդվածը տարածվում են 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագող հարաբերությունների վրա:

2. Արցախի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ ընդերքօգտագործման հավաստագիր ստացած ընդերքօգտագործողը մինչև 2013 թվականի հունվարի 1-ը գործող օրենսդրությանը համապատասխան ռոյալթի վճարելու դեպքում

հավաստագրի գործողության ժամկետի ավարտին հաջորդող տարվա համար Օրենքով սահմանված ռոյալթիի եռամսյակային կանխավճարները կատարում է նախորդ տարվա ընթացքում մետաղական օգտակար հանածոների համար հաշվարկված բնօգտագործման վճարների և ռոյալթիների հանրագումարի մեկ երրորդի չափով:

3. Արցախի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ ընդերքօգտագործման հավաստագիր ստացած ընդերքօգտագործողը մինչև 2013 թվականի հունվարի 1-ը գործող օրենսդրությանը համապատասխան բնօգտագործման վճար վճարելու դեպքում հավաստագրի գործողության ժամկետի ավարտին նախորդող ժամանակահատվածներում մետաղական օգտակար հանածոների փաստացի մարված պաշարների համար բնօգտագործման վճար հաշվարկված լինելու դեպքում այդ մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար Օրենքով սահմանված կարգով հաշվարկված ռոյալթիի գումարից հաշվանցում է հաշվարկված բնօգտագործման վճարի գումարը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝**

**Բ. ՄԱՀԱԿՑԱՆ**

2019թ. ապրիլի 12  
Ստեփանակերտ  
ՀՕ-17-Ն



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2019թ.

N 204-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 588 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,3735 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2019թ.

N 205-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով Արցախի Հանրապետության կառավարությունը **ն ր ո շ ու մ է:**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 186 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի Շուշիի քաղաքային համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝

1) բնակավայրերի նպատակային նշանակության 1,6 հեկտար այլ հողերը փոխադրել գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ բազմամյա տնկարկների:

2) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,81868 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը փոխադրել գյուղատնտեսական նպատակային նշանակության՝ արոտավայրերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2019թ.

N 206-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 172 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Տոնաշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նպատակային նշանակության 0,16 հեկտար անտառը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2019թ.

N 209-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ  
ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018  
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N1135-Ն ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N48-Ա  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ յ ղ մ մ է**.

1. «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1135-Ն որոշման N2 հավելվածի N1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի «Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության 2019 թվականի կենտրոնացված միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N48-Ա որոշմամբ հաստատված հավելվածի «Մարզական միջոցառումներ» 11-րդ բաժնի աղյուսակի՝

1) 1-ին տողի «99796,9» թիվը փոխարինել «93609,9» թվով.

2) 3-րդ տողի «8700,0» թիվը փոխարինել «14887,0» թվով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»  
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ  
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N1135-Ն ՈՐՈՇՄԱՆ  
N2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N1 ԱՂՅՈՒՍԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				I եռամսյակ	I կիսամյակ	Իննամիս	Տարի
			<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՄԵՐ</b>	-	-	-	-
			<i>այդ թվում՝</i>	-	-	-	-
<b>09</b>			<b>ԿՐԹՈՒԹՅՈՒՆ</b>	-	-	-	-
	<b>1</b>		<b>Նախադպրոցական կրթություն</b>	-	(1400,0)	1400,0	-
		<b>1</b>	Նախադպրոցական կրթություն	-	(1400,0)	1400,0	-
		<b>03</b>	Նախադպրոցական հիմնարկներ	-	(1400,0)	1400,0	-
			ԱՀ կառավարություն	-	(1400,0)	1400,0	-
	<b>6</b>		<b>Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ</b>	-	1400,0	(1400,0)	-
		<b>1</b>	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	-	1400,0	(1400,0)	-
		<b>14</b>	Կենտրոնացված կարգով կրթական և մարզական հաստատությունների համար գույքի ձեռքբերում և տեղափոխում	-	1400,0	(1400,0)	-
			ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն	-	1400,0	(1400,0)	-

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2019թ.

N 211-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 615-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ա շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոններ զբաղեցնողների և արտակարգ իրավիճակների պետական ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը և վճարման կարգը սահմանելու մասին» N 615-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.2-րդ ենթակետով.

«1.2) Արցախի Հանրապետության ոստիկանության գործադիր մարմնի համակարգում զինվորական ծառայության պաշտոններ զբաղեցնողների ամսական լրավճարների առավելագույն չափերը՝ համաձայն N 3 հավելվածի (գաղտնի).».

2) որոշումը լրացնել նոր՝ N 3 հավելվածով՝ համաձայն հավելվածի (գաղտնի):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2019թ.

N 212-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019  
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի N 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ղ ղ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 1-ի «Արցախի Հանրապետության Նախագահի 2019 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի մասին» N 21-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 100-րդ կետի 4-րդ սյունակի «Առաջին եռամսյակ» բառերը փոխարինել «Երկրորդ եռամսյակ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2019թ.

N 213-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 275-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա որոշում է:**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 26-ի «Աշխատողի աշխատանքի ընդունումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստն արձանագրելու կարգն ու արձանագրության ձևը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հուլիսի 31-ի N 538-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 275-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) որոշման վերնագրում և որոշմամբ սահմանված կարգի վերնագրում «ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ» բառերով.

2) որոշման 1-ին կետում, որոշմամբ սահմանված կարգի 1-ին, 4-րդ ու 5-րդ կետերում և արձանագրության ձևում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով.

3) որոշմամբ սահմանված կարգի՝

ա. 2-րդ և 3-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Աշխատողի աշխատանքի ընդունումը Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) և (կամ) նոր աշխատողի համար սահմանված ժամկետում գրանցման հայտ չներկայացնելու փաստն արձանագրվում է հարկ վճարողի (տնտեսավարող սուբյեկտի) մոտ հարկային մարմնի կողմից իրականացվող Արցախի Հանրապետության պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության, առանց պետական գրանցման (հաշվառման) ձեռնարկատիրական գործունեության իրականացման և (կամ) առանց անհատական իրավական ակտի և (կամ)



գրավոր պայմանագրի և (կամ) առանց գրանցման հայտի ներկայացման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված ստուգումների (սույն կարգի իմաստով՝ ստուգում) շրջանակներում: Սույն կարգի իմաստով՝

1) աշխատողի աշխատանքի ընդունումը համարվում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպված, եթե առկա չէ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ և (կամ) գրավոր պայմանագիր:

2) նոր աշխատողի համար գրանցման հայտը համարվում է չներկայացված, եթե այն չի ներկայացվել մինչև ստուգումը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, իսկ ստուգումը փաստացի սկսելու օրը աշխատանքի ընդունման և աշխատանքը փաստացի սկսելու դեպքում՝ մինչև ստուգումը փաստացի սկսելու օրվա ժամը 14:00-ն:

3. Սույն կարգի 2-րդ կետում նշված ստուգման ընթացքում աշխատողի աշխատանքի ընդունումն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) դեպք (փաստ) է համարվում նաև այն դեպքը, երբ ստուգում իրականացնող անձինք գործատուի մոտ իրականացվող ստուգման շրջանակներում գործատուի մոտ առկա համապատասխան վճարահաշվարկային կամ այլ փաստաթղթերի (մասնավորապես, աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերի, գործատուի և (կամ) վարձու աշխատողի հայտարարության) հիման վրա արձանագրում են տվյալ գործատուի մոտ նախկինում փաստացի աշխատանքային հարաբերությունների մեջ եղած վարձու աշխատողի առկայությունը (աշխատողի համար աշխատավարձ և դրան հավասարեցված այլ միջոցներ կամ եկամտային հարկ հաշվարկված լինելու հանգամանքը)՝ առանց աշխատանքային հարաբերությունների մեջ եղած ժամանակ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի ընդունման և (կամ) գրավոր պայմանագրի կնքման:»,

բ. 4-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) կազմում են ստուգման պահին փաստացի աշխատանք կատարող այն անձանց ցանկը, որոնց մասով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա նոր աշխատողի համար օրենքով սահմանված ժամկետում գրանցման հայտ չի ներկայացվել (բացառությամբ կացության կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև այն անձանց, որոնց գրանցման հայտում ներառվելիք տեղեկատվությունն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված է որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն).»,

գ. 4-րդ կետի 5-րդ ենթակետում «չի ներկայացնում աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ և (կամ) գրավոր պայմանագիր և (կամ) որոնց մասով ստուգումը սկսելու օրվան նախորդող օրվա դրությամբ չի ներկայացվել գրանցման հայտ» բառերը փոխարինել «չի ներկայացրել աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ և (կամ) գրավոր պայմանագիր» բառերով, «բ» պարբերության միջակետը փոխարինել ստորակետով և լրացնել հետևյալ բովանդակությամբ «գ» և «դ» պարբերություններ.

«գ. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 201.1-ին հոդվածով սահմանված՝ մասնագիտական ուսուցում անցնող աշակերտների կամ աշխատանքի ընդունվող անձանց (եթե առկա է համապատասխան գրավոր պայմանագիր),

դ. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ կամավոր աշխատանք կատարող կամ կամավոր ծառայություն մատուցող անձանց.»,

դ. 4-րդ կետի 8-րդ ենթակետում «7-րդ ենթակետով» բառերից հետո լրացնել «, ինչպես նաև սույն կարգի 3-րդ կետով» բառերը,

ե. 5-րդ կետում «անձնագրային» բառից հետո լրացնել «(, դրանց բացակայության դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի)» բառերը.

4) որոշմամբ սահմանված արձանագրության ձևում «(անօրինական աշխատանքի)» բառերը հանել, ««Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքին համապատասխան անցկացված» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան անցկացված» բառերով, «ներկայացված չէ գրանցման հայտը» բառերը՝ «նոր աշխատողի համար օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացվել գրանցման հայտ» բառերով և լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություն.

«Արձանագրությանը կարող են կցվել տվյալ ստուգմանը վերաբերող այլ փաստաթղթեր (բացատրություն, տեղեկանք և այլն):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2019թ.

N 214-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2000 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՄԻ 11-Ի N 138 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի «Արցախի Հանրապետությունում արտադրվող ակցիզային հարկով հարկման ենթակա որոշ ապրանքների ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման մասին» N 138 որոշման 2-րդ կետի «գ<sup>10</sup>» ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2019թ.

N 217-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2014 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 5-Ի N 519-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի օգոստոսի 5-ի «Պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասին» N 519-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 5-րդ, 18-20-րդ, 23-րդ կետերում և Ձև N 2-ում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառերով.

2) 31-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների պետական ծառայության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության, Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության, Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության, Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության, Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության, Արցախի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2019թ.

N 224-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 87-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առ ոչ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 24-ի «Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգը հաստատելու մասին» N 87-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 3-րդ, 13-րդ, 16-րդ և 28-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքաշինության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության քաղաքաշինության» բառերով.

2) 3-րդ կետի 2-րդ ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության ֆինանսների» բառերով.

3) 21-րդ և 22-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

4) «VI. ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«VI. ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ**

14. Նյութերի արժեքը հաշվարկվում է՝

$$U_n = (U_1 \times Q_{n1} + U_2 \times Q_{n2} + \dots + U_m \times Q_{nm}) \times 1.01 \times 1.01 \times Q_{որոշմանայ} \quad (6)$$

որտեղ՝

U<sub>n</sub>՝ նյութերի արժեք

U<sub>1</sub>, U<sub>2</sub>, U<sub>m</sub>՝ նյութերի ծախսը՝ ըստ նախահաշվային նորմերի

Q<sub>n1</sub>, Q<sub>n2</sub>, Q<sub>nm</sub>՝ նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արժեքները՝ գործող գներով: Գործող գների համար հիմք է հանդիսանում ինֆորմացիոն տեղեկագիրը: Ինֆորմացիոն տեղեկագրում չներառված նյութերի գները համաձայնեցվում են պատվիրատուի հետ:

1,01 (1%) - այլ նյութեր հաշվի առնող գործակից (այն նյութերն են, որոնք ընդգրկված չեն նախահաշվի նյութերի ցանկում և չեն համարվում հիմնական շինարարական նյութեր, բայց օգտագործվում են շինարարության պրոցեսում),

բացառությամբ ճանապարհաշինության օբյեկտների, ինժեներական գծային կառույցների

1,01 (1%) -փաթեթավորման-պահեստավորման գործակից

Գորանսպ – տրանսպորտային ծախսի գործակից:

15. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ, իսկ Քաշաթաղի շրջանում՝ Բերձոր քաղաքներից մինչև 20 կմ հեռավորության վրա գտնվող բնակավայրերի համար Գորանսպ գործակիցը կազմում է 1.02 (2%):

Արցախի Հանրապետության այն բնակավայրերի համար, որոնց հեռավորությունը Արցախի Հանրապետության Ստեփանակերտ, իսկ Քաշաթաղի շրջանում՝ Բերձոր քաղաքներից սկսած գերազանցում է 20 կմ, Գորանսպ գործակիցը հաշվարկվում է՝

$Գորանսպ = 1 + S \times 0.1\%$

որտեղ՝

S - հեռավորությունը Արցախի Հանրապետության Ստեփանակերտ, իսկ Քաշաթաղի շրջանում՝ Բերձոր քաղաքներից մինչև տվյալ բնակավայրը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2019թ.

N 231-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 588 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Այգեստանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,2 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Այգեստանի համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2019թ.

N 232-Ն

ք.Ստեփանակերտ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇԸ (ՆԿԱՐԱԳԻՐԸ), ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 522  
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒՅԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեխնիկական կանոնակարգման մասին» Արցախի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա թ ա շ ու մ է**:

1. Մահմանել՝

1) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը հավաստող համապատասխանության ազգային նշանի նմուշը (նկարագիրը)՝ համաձայն N 1 հավելվածի.

2) տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը հավաստող համապատասխանության ազգային նշանի կիրառման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի «Համապատասխանության նշանի պատկերը, դրան ներկայացվող տեխնիկական պահանջները և կիրառման կարգը հաստատելու մասին» N 522 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից վեց ամիս հետո:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ



**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇԸ (ՆԿԱՐԱԳԻՐԸ)**

1. Համապատասխանության ազգային նշանը (այսուհետ՝ համապատասխանության նշան) բաղկացած է հետևյալ տառերից՝ Հ, Տ և Կ:
2. Համապատասխանության նշանի գրաֆիկական պատկերը ներկայացված է ձև N 1-ում:
3. Համապատասխանության նշանը կիրառելիս պետք է ապահովվի համապատասխանության նշանի հստակությունը և տեսանելիությունը, ինչպես նաև մակնշվածքի ամրությունը:
4. Համապատասխանության նշանի տառերն իրարից տարանջատվում են սպիտակ ֆոնով: Համապատասխանության նշանի յուրաքանչյուր տառի արտաքին և ներքին շերտերը սև են՝ մեջտեղում տարանջատվելով սպիտակ ֆոնով:
5. Համապատասխանության նշանի բարձրության և լայնության միջև պետք է պահպանվի 2:5 հարաբերակցություն: Համապատասխանության նշանի բարձրությունը պետք է լինի 5 մմ-ից ոչ պակաս:

Ձև N 1. Համապատասխանության նշանի գրաֆիկական պատկեր



**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**ԿԱՐԳ**  
**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԻՆ**  
**ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ**  
**ԱԶԳԱՅԻՆ ՆՇԱՆԻ ԿԻՐԱՌՄԱՆ**

1. Մույն կարգով կարգավորվում են համապատասխանության ազգային նշանի (այսուհետ՝ համապատասխանության նշան) կիրառման հետ կապված հարաբերությունները:

2. Մույն կարգում օգտագործվող հասկացություններն ունեն այն իմաստը, որը սահմանված է «Տեխնիկական կանոնակարգման մասին» Արցախի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածում:

3. Համապատասխանության նշանը կիրառվում է կանոնակարգվող ոլորտում արտադրանքի (այսուհետ՝ արտադրանք) համար և ցույց է տալիս, որ արտադրանք արտադրողը կամ Արցախի Հանրապետությունում գտնվող նրա լիազոր ներկայացուցիչը գործող տեխնիկական կանոնակարգերի բոլոր պահանջներով համոզվել է արտադրանքի համապատասխանության մեջ՝ տվյալ արտադրանքը ենթարկելով համապատասխան տեխնիկական կանոնակարգերով նախատեսված համապատասխանության զննահատման ընթացակարգերին:

4. Այն արտադրանքի համար, որի վրա տարածվում են համապատասխանության նշանի կիրառում նախատեսող մի քանի տեխնիկական կանոնակարգեր, տվյալ նշանով մակնշումը ցույց է տալիս տվյալ արտադրանքի՝ բոլոր կիրառելի տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանությունը:

5. Կանոնակարգվող ոլորտի այն արտադրանքը, որի տեխնիկական կանոնակարգը նախատեսում է համապատասխանության նշանի կիրառում, պետք է մակնշվի համապատասխանության նշանով:

6. Համապատասխանության նշանը դրոշմվում է տեխնոլոգիական ցանկացած եղանակով, որն ապահովում է արտադրանքի շահագործման ամբողջ ընթացքում պատկերի ամբողջականությունը, հստակությունն ու վերջինիս ջնջվելու (մաքրվելու) հնարավորության բացառումը:

7. Տեխնիկական կանոնակարգով սահմանված համապատասխանության նշանը կիրառվում է տվյալ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող և դրա օբյեկտ հանդիսացող ամբողջ արտադրանքի համար:

8. Արցախի Հանրապետությունում համապատասխանությունը հավաստող համապատասխանության նշանը կարող է կիրառել միայն արտադրողը կամ Արցախի Հանրապետությունում նրա լիազոր ներկայացուցիչը:

9. Համապատասխանության նշանի տրամադրման կամ օգտագործման համար վճար չի գանձվում:

10. Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանելու դեպքում համապատասխանության նշանը դրվում է արտադրանքի փաթեթի կամ պիտակի վրա, իսկ գործընթացների համար՝ օգտագործվում է գովազդային նյութերում:

11. Համապատասխանության նշանով նույն արտադրանքը միաժամանակ կարող է կրել նաև այլ համապատասխանությունը փաստող օտարերկրյա նշաններ՝ պայմանով, որ համապատասխանության նշանի հետ տվյալ նշանները թյուրիմացություն չեն առաջացնի: Այլ նշաններ կարող են կիրառվել այն պայմանով, որ նշանների կիրառման հետևանքով համապատասխանության նշանի տեսանելիությունն ու հստակությունը չեն վատթարանա:

12. Տեխնիկական կանոնակարգերով նախատեսված համապատասխանության գնահատման չենթարկված արտադրանքի և գործընթացների համար արգելվում է համապատասխանության նշանի կիրառումը:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

5 ապրիլի 2019թ.

N 233-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ  
ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N 1047-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 21-ի «Արցախի Հանրապետության 2018-2019 ուսումնական տարվա պետական հանրակրթական, մանկապատանեկան արտադպրոցական և նախադպրոցական, բարձրագույն, միջին մասնագիտական և արհեստագործական ուսումնական հաստատությունների ցանցի հաստատման, պետական ոչ առևտրային կազմակերպության վերանվանման ու հիմնադրման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 28-ի N 575 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու և ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին» N1047-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները.

1) որոշումը լրացնել նոր 3.1 կետով.

«3.1 Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի «Քերթի Կ.Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում բացել երկու նախադպրոցական խումբ՝ շաբաթական հնգօրյա և օրական ութժամյա տևողությամբ:».

2) որոշումը հաստատված հավելվածի «7. Դպրոցին կից նախադպրոցական խմբեր» աղյուսակի 4-րդ տողի «4» և «50» թվերը փոխարինել «6» և «90» թվերով, իսկ «Ընդամենը» տողի «64» և «1351» թվերը փոխարինել «66» և «1391» թվերով:

2. Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մտնելուց հետո տասնօրյա ժամկետում հաստատել Մարտունու շրջանի «Քերթի Կ.Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը սեփականության և անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող գույքի կազմը:

3. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի «Քերթի Կ.Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը կից նախադպրոցական խմբերի 2019 թվականի ապրիլ-դեկտեմբեր ամիսների պահպանման ծախսերն իրականացնելու նպատակով «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի

Հանրապետության օրենքի N 1 հավելվածի 09 բաժնի 1 խմբի 1 դասի «03 Նախադպրոցական հիմնարկներ» ծախսային ծրագրի միջոցներից Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի վարչակազմին 2019 թվականին հատկացնել 11 903 100 (տասնմեկ միլիոն ինը հարյուր երեք հազար հարյուր) ՀՀ դրամ, որից՝ առաջին կիսամյակում՝ 3 261 000 (երեք միլիոն երկու հարյուր վաթսունմեկ հազար) ՀՀ դրամ, ինն ամսում՝ 7 131 000 (յոթ միլիոն հարյուր երեսունմեկ հազար) ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման 451100 «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածով):

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

8 ապրիլի 2019թ.

N 241-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 172 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Տոնաշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 3,5 հեկտար արոտավայրը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ապրիլի 2019թ.

N 245-Ն

ք.Ստեփանակերտ

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՈՒ ԲՆԱԿԱՆ  
ԳԱԶԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ (ՓՈԽԱԴՐՄԱՆ) ԵՎ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆՑԵՐՈՒՄ  
ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ (ԲՆԱԿԱՆ) ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ  
ՉԱՓԵՐՆ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Սահմանել 2019 թվականի համար էլեկտրական էներգիայի ու բնական գազի հաղորդման (փոխադրման) և բաշխման ցանցերում նորմատիվային (բնական) կորուստների առավելագույն չափերը՝

1) «ԱՐՅԱԽԷՆԵՐԳՈ» փակ բաժնետիրական ընկերության համար՝ 11,2 տոկոս:

2) «ԱՐՅԱԽԳԱԶ» փակ բաժնետիրական ընկերության համար՝ 2,8 տոկոս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ապրիլի 2019թ.

N 246-Ն

ք.Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առ ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Ա. Առաքելյան 1-ին փակուղի թիվ 1/13 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,116806 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ապրիլի 2019թ.

N 248-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 4-ի N 178 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Ջիվանի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 1,42 հեկտար արոտավայրը փոխադրել ջրային նպատակային նշանակության՝ ջրամբարների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ապրիլի 2019թ.

N 249-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Մոշաթաղի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,79874 հեկտար այլ հողատեսքերը՝ համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ապրիլի 2019թ.

N 250-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ  
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 384 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քոասնի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,010753 հեկտար և 0,012 հեկտար արոտավայրերը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Քոասնիի համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ապրիլի 2019թ.

N 255-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 306-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու մասին» N 306-Ն որոշմամբ սահմանված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) կարգի 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կամ» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կամ» բառերով.

2) կարգի 1-ին և 7.2-րդ կետերում «բնակարանի» բառից հետո լրացնել «կամ անհատական բնակելի տան» բառերը.

3) կարգի 2-րդ և 3-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն կարգը տարածվում է Արցախի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում առաջնային շուկայից, ինչպես նաև պետության և (կամ) պետության ստեղծած հիմնադրամի և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ պետության ստեղծած հիմնադրամից կամ համայնքից բնակարան (այդ թվում՝ ավտոկայանատեղի, եթե այն Արցախի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կցված է բնակարանին) ձեռք բերած (ձեռք բերող) կամ Արցախի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համալիրներում անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տուն ձեռք բերող կամ Արցախի Հանրապետության տարածքում անհատական բնակելի տուն կառուցած (կառուցող) վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի (այսուհետ՝ վարկառու) վրա՝ վերջիններիս կողմից սույն կարգի 6-րդ կետով սահմանված փաստաթղթերը կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքի կամ անհատական բնակելի տան գտնվելու վայրի հարկային մարմին (այսուհետ՝ հարկային մարմին) ներկայացվելու դեպքում: Սույն կարգի կիրառման իմաստով վարկառու է հանդիսանում նաև վարձու աշխատող կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող հիփոթեքային վարկի պայմանագրով նախատեսված համավարկառուն՝ բնակարանի

(անհատական բնակելի տան) սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականով նախատեսված սեփականատեր (համասեփակա-նատեր՝ համատեղ կամ բաժնային սեփականության իրավունք ունեցող անձ) հանդիսանալու դեպքում:

3. Սույն կարգի կիրառման իմաստով՝

1) առաջնային շուկայից բնակարանի ձեռքբերում է հանդիսանում անմիջապես կառուցապատողից բնակարանի ձեռքբերումը.

2) առաջնային շուկայից անհատական բնակելի տան ձեռքբերում է հանդիսանում անմիջապես կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող կառուցապատողից անհատական բնակելի տան ձեռքբերումը:».

4) կարգի 6-րդ կետում՝

ա. 1-ին ենթակետում «նշումով» բառից հետո լրացնել «, ինչպես նաև աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումը վճարած գործատուի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը (այսուհետ՝ ՀՎՀՀ)» բառերը,

բ. 3-րդ ենթակետում «հարկ վճարողի հաշվառման համար (այսուհետ՝ ՀՎՀՀ)» բառերը փոխարինել «ՀՎՀՀ» հապավումով,

գ. 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) հիփոթեքային վարկի տրամադրման պայմանագրի բնօրինակ կամ այդ պայմանագրի՝ նոտարական կարգով վավերացված պատճեն և հիփոթեքային պայմանագրի շրջանակներում ձեռք բերվող՝ գրավադրված գույքի սեփականության (կամ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի) պետական գրանցման վկայականի պատճեն, իսկ պետության և (կամ) պետության ստեղծած հիմնադրամի և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ պետության ստեղծած հիմնադրամից կամ համայնքից բնակարան ձեռք բերող քաղաքացու դեպքում՝ համապատասխան ծրագրով նախատեսված հիփոթեքային վարկի տրամադրման պայմանագրի բնօրինակ կամ այդ պայմանագրի՝ նոտարական կարգով վավերացված պատճեն և համապատասխան գույքային իրավունքի գրանցման վկայականի պատճեն, էթե ծրագրով կիրառելի է գրանցում.».

դ. 6-րդ և 7-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) Արցախի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում կառուցված կամ կառուցվող բնակարանը կամ Արցախի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համալիրներում կառուցված կամ կառուցվող անհատական բնակելի տունն անմիջապես կառուցապատողից ձեռք բերված (բերվող) լինելու դեպքում (բացառությամբ պետությունից կամ պետության ստեղծած հիմնադրամից կամ համայնքից բնակարան ձեռք բերելու դեպքերի)՝ անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող լիազոր մարմնի կողմից տրված տեղեկանք բնակարանը կամ անհատական բնակելի տունն անմիջապես կառուցապատողից ձեռք բերված (բերվող) լինելու մասին.

7) Արցախի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տուն կառուցած լինելու կամ կառուցելու դեպքում՝ վարկառու համարվող անձին տրված՝ անհատական բնակելի տան շինարարության շահագործման փաստագրման ակտի և սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի պատճեններ

կամ անհատական բնակելի տան շինարարության գործող թույլտվության պատճեն.»,

ե. լրացնել հետևյալ բովանդակությամբ 7.1-ին ենթակետ.

«7.1) մասնագիտացված կազմակերպության կողմից հաստատված նախահաշվի պատճեն՝ Արցախի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տուն կառուցելու դեպքում.»,

զ. 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) Արցախի Հանրապետության տարածքում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում բնակարանի առուվաճառքի (այդ թվում՝ նախնական) կամ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու իրավունքի մասին պայմանագրի պատճեն կամ Արցախի Հանրապետության տարածքում բնակելի թաղամասերում կամ համալիրներում կառուցված կամ կառուցվող անհատական բնակելի տան առուվաճառքի կամ կառուցվող անհատական բնակելի տուն գնելու իրավունքի մասին պայմանագրի պատճեն, իսկ պետության և (կամ) պետության ստեղծած հիմնադրամից և (կամ) համայնքի կողմից իրականացվող բնակարանային ապահովության ծրագրի շրջանակներում պետությունից կամ պետության ստեղծած հիմնադրամից կամ համայնքից բնակարան ձեռք բերող քաղաքացու դեպքում՝ համապատասխան ծրագրով նախատեսված պայմանագրի պատճեն (առուվաճառքի նախնական պայմանագրի, առուվաճառքի պայմանագրի կամ կառուցվող շենքից անշարժ գույք գնելու պայմանագրի պատճեն).».

5) կարգի 6-րդ կետի 2-րդ, 5-րդ և 9-րդ ենթակետերում ու 6.1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

6) կարգի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Եկամտային հարկի վերադարձի մասին դիմումը մերժվում է, եթե՝

1) այն ներկայացնելու պահին հարկային գործակալն ամբողջությամբ չի մարել եկամտային հարկի (եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների) գծով հարկային պարտավորությունը կամ անհատ ձեռնարկատերն ամբողջությամբ չի մարել եկամտային հարկի (եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների) գծով հարկային պարտավորությունը.

2) չեն ներկայացվել սույն կարգի 6-8-րդ կետերով պահանջվող փաստաթղթերը.

3) ձեռք բերվող բնակարանի կամ անհատական բնակելի տան գործարքի պայմանագրային արժեքը կամ կառուցվող անհատական բնակելի տան նախահաշվային արժեքը գերազանցում է 55 000 000 ՀՀ դրամը.

4) ստացված հիփոթեքային վարկի պայմանագրերի շրջանակներում վարկառու և համավարկառու ֆիզիկական անձինք սույն որոշմամբ սահմանված կարգով մեկ անգամ օգտվել են հիփոթեքային վարկի սպասարկման համար վարձու աշխատողի և անհատ ձեռնարկատիրոջ կողմից վճարված տոկոսների գումարների չափով եկամտային հարկի վերադարձման հնարավորությունից.

5) ներկայացված փաստաթղթերով կամ երրորդ անձանցից ստացած տեղեկություններով պարզ է դարձել, որ հիփոթեքային վարկը փաստացի չի ուղղվել բնակարանի կամ անհատական բնակելի տան ձեռքբերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանը.

6) բնակարանի կամ անհատական բնակելի տան ձեռքբերումից կամ անհատական բնակելի տան ավարտական ակտը և գույքի սեփականության (կամ գույքի նկատմամբ իրավունքի) պետական գրանցման վկայականը ստանալու ամսաթվից սկսած՝ յուրաքանչյուր օրացուցային տարում վարկառուն առնվազն 183 օր փաստացի չի բնակվում տվյալ բնակարանում (անհատական բնակելի տանը)։

7) բնակարանը (անհատական բնակելի տունը) հանձնվել է վարձակալության կամ անհատույց օգտագործման, բացառությամբ մերձավոր ազգակցական կապի (երեխա, ամուսին, ծնող, քույր, եղբայր, պապ, տատ, թոռ) մեջ գտնվող անձանց։

Եկամտային հարկի վերադարձի մասին դիմումը հարկային մարմնի կողմից մերժվելու դեպքում դիմումը ներկայացնելուն հաջորդող տասն աշխատանքային օրվա ընթացքում մերժման հիմքերի մասին ծանուցվում է վարկառուին:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 ապրիլի 2019թ.

N 256-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 26-Ի N 307-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ղ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի «Կառուցված և կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի վերաբերյալ հարկային մարմնին տեղեկություններ տրամադրելու կարգը սահմանելու մասին» N 307-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) որոշման վերնագրում «ՇԵՆՔԵՐԻ» բառից հետո լրացնել «, ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ» բառերը.

2) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում և որոշմամբ սահմանված կարգի 1-ին կետում «շենքերի» բառից հետո լրացնել «, անհատական բնակելի տների» բառերը.

3) որոշման և որոշմամբ սահմանված կարգի 1-ին կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմ» բառերի համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն» բառերի համապատասխան հոլովաձևերով.

4) որոշմամբ սահմանված կարգի՝

ա. վերնագրում «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ» բառերով,

բ. 3-րդ և 5-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքում» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ապրիլի 2019թ.

N 264-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2008 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի N 618 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 16-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 618 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը.

1) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին կետով.

«1.1. Սահմանել, որ ծերերի և հաշմանդամների խնամք իրականացնող տուն-ինտերնատին հատկացվող, խնամվողների խնամքի և սոցիալական սպասարկման անհրաժեշտությունից ելնելով, առանձին ապրանքատեսակների ցանկը հաստատում է Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարը (այսուհետ՝ նախարար)»:

2) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն որոշմամբ հաստատված նվազագույն չափորոշիչների ապահովման համար, ինչպես նաև նախարարի կողմից հաստատված առանձին ապրանքատեսակների ձեռքբերման նպատակով անհրաժեշտ ծախսերը նախատեսել յուրաքանչյուր տարվա Արցախի Հանրապետության պետական բյուջեի նախագծով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ապրիլի 2019թ.

N 265-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի N 198-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**.

1. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 19-ի «Պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման կարգը, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների օգտագործման ժամկետները հաստատելու և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 15-ի N 287 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 198-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1) 10-րդ կետում «մասնագիտական եզրակացություն տալիս է կենտրոնը» բառերը փոխարինել «վերականգնողական բժշկական փորձաքննական եզրակացությունը տալիս է կենտրոնը, իսկ պրոթեզների, օրթեզների տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը՝ կազմակերպությունը» բառերով.

2) 22-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Սույն կարգով սահմանված ժամկետներից շուտ պրոթեզ, օրթեզ տրամադրելու դեպքում անձնական քարտին կցվում են սույն կարգի 10-րդ կետում նշված պրոթեզի, օրթեզի տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը և լուսանկարը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ապրիլի 2019թ.

N 269-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 235-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 26-ի «Որդեգրման կարգը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը հաստատելու, որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի կանոնադրությունը և անհատական կազմը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 6-ի N 60 և 2007 թվականի մայիսի 15-ի N 217 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 235-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրից հանել «, ՈՐԴԵԳՐՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ» բառերը.

2) ուժը կորցրած ճանաչել որոշման 1.1-ին և 1.2-րդ կետերը.

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածում՝

ա. 4-րդ կետից հանել «(ծնողների)» և «կամ որդեգրել ցանկացող այլ անձ» բառերը, իսկ «ծնողների» բառը փոխարինել «ծնողի» բառով,

բ. 4-րդ և 38-րդ կետերում «ազգականները» բառը փոխարինել «մերձավոր ազգականները» բառերով,

գ. 21-րդ կետում «7» թիվը փոխարինել «15» թվով,

դ. 23-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«23. Որդեգրման վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրությունն իրականացնում է կենտրոնական մարմնի ղեկավարի հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խումբը (այսուհետ՝ աշխատանքային խումբ), որի կազմը ձևավորվում է կենտրոնական մարմնի, նախարարության, Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության, Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության, Արցախի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության և Արցախի

Հանրապետության ոստիկանության (այսուհետ՝ ոստիկանություն) ներկայացուցիչներից: Աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատում է կենտրոնական մարմնի ղեկավարը:»,

ե. 24-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«24. Աշխատանքային խմբի առաջարկությունների հիման վրա կենտրոնական մարմինը մեկամյա ժամկետում տալիս է որդեգրման հնարավորության մասին դրական կամ բացասական եզրակացություն և գրավոր տեղեկացնում դիմողին: Որդեգրման հնարավորության մասին եզրակացության ձևը հաստատում է կենտրոնական մարմնի ղեկավարը:»,

զ. 25-րդ կետում «12» թիվը փոխարինել «18» թվով, իսկ «հանձնաժողովը» բառը՝ «կենտրոնական մարմինը» բառերով,

է. 26-րդ կետում Հանձնաժողովը» բառը փոխարինել «Կենտրոնական մարմինը» բառերով,

ը. 27-րդ կետում «հանձնաժողովից» բառը փոխարինել «կենտրոնական մարմնից» բառերով,

թ. 31-րդ կետից հանել «հանձնաժողովին և» բառերը,

ժ. 37-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,

ժա. 38-րդ կետից հանել «կամ, երբ երեխայի ծնողերի և որդեգրել ցանկացող անձի (անձանց) միջև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով առկա է գրավոր համաձայնություն» բառերը,

ժբ. 49-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«49. Կենտրոնական մարմինը երեխայի անձնական գործի և անհրաժեշտ այլ փաստաթղթերի պատճենները 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է ոստիկանություն, որը համապատասխան ուսումնասիրության արդյունքների մասին 10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում է կենտրոնական մարմնին:

Ոստիկանության բացասական կարծիքի դեպքում կենտրոնական մարմինը քննարկման արդյունքում կարող է կասեցնել որդեգրման գործընթացը՝ տեղեկացնելով նախարարությանը:»,

ժգ. 50-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«50. Կենտրոնական մարմինը երեխայի որդեգրման նպատակահարմարության վերաբերյալ ոստիկանության կարծիքը, որդեգրել ցանկացող օտար-երկրացու կամ Արցախի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Արցախի Հանրապետության քաղաքացու անձը հաստատող փաստաթղթի, ամուսնության վկայականի (եթե ամուսնացած է) հայերեն թարգմանված օրինակների, Արցախի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրելու հնարավորության մասին դրական եզրակացության պատճենները և որդեգրման ենթակա երեխայի անձնական գործի պատճենահանված օրինակն ու կենտրոնական հաշվառման մասին տեղեկանքը 3 աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչություն:»,

ժդ. 56-րդ կետում «հանձնաժողովը» բառը փոխարինել «կենտրոնական մարմինը» բառերով,

ժե. N 6 ձևում «որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովի» բառերը փոխարինել «կենտրոնական մարմնի» բառերով.

4) ուժը կորցրած ճանաչել որոշմամբ հաստատված N3 և N4 հավելվածները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՄԱՀԱԿՅԱՆ**

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ապրիլի 2019թ.

N 270-Ն

ք.Ստեփանակերտ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ջ ու մ է:**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով նախատեսված կենտրոնական մարմին նշանակել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՑԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2019թ.

N 273-Ն

ք.Ստեփանակերտ

**ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ, ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱԶՄԱԶԱՎԱԿՈՒԹՅԱՆ  
ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N 15-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ  
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Պետական նպաստների համակարգման, հանրապետությունում ծնելիության և բազմազավակության խթանման նպատակով և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է:**

1. Հաստատել՝

1) պետական նպաստների նշանակման և վճարման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) երեխայի ծննդյան միանվագ նպաստի տրամադրման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) չափահասության նպաստի տրամադրման կարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Մահմանել, որ Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝

1) առանձին խմբերում ընդգրկված քաղաքացիներին տրամադրվում են պետական նպաստներ, որոնք հաշվարկվում են պետական նպաստի բազային չափի և անձի կարգավիճակով պայմանավորված՝ գործակցի արտադրյալով.

2) երեխայի ծննդյան դեպքում ծնողին տրամադրվում է ծննդյան միանվագ նպաստ, որը հաշվարկվում է ծննդյան միանվագ նպաստի բազային չափի և ծնված երեխայի հաջորդականությամբ պայմանավորված՝ գործակցի արտադրյալով.

3) ընտանիքում ծնված 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխային՝ 18 տարին լրանալու դեպքում, տրամադրվում է չափահասության նպաստ.

4) հինգ և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքի համար գնվում է բնակարան կամ բնակելի տուն կամ կառուցվում բնակելի տուն:

3. Մահմանել՝

1) պետական նպաստի բազային չափը՝ 6 000 ՀՀ դրամ.

2) երեխայի ծննդյան միանվագ նպաստի բազային չափը՝ 100 000 ՀՀ դրամ:

4. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարին՝ ապահովել սույն որոշման հանրային իրազեկումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

6. Սահմանել, որ.

1) մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող պետական նպաստների նշանակման և վճարման կարգին համապատասխան պետական նպաստի իրավունք ձեռք բերած 18 տարին չլրացած չորս երեխա ունեցող ընտանիքներին պետական նպաստ նշանակելու և վճարելու հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև պետական նպաստի բազային չափի բազմապատիկ գործակիցները կարգավորվում են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող պետական նպաստների նշանակման և վճարման կարգով.

2) մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման կարգին համապատասխան ծննդյան միանվագ նպաստի իրավունք ձեռք բերած անձանց ծննդյան միանվագ նպաստ վճարել մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող ծննդյան միանվագ նպաստի նշանակման և վճարման կարգին համապատասխան.

3) մինչև 2019 թվականի հունվարի 1-ը բացված ժամկետային ավանդների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող ժամկետային ավանդների բացման կարգով.

4) մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը գործող ժամկետային ավանդների բացման կարգին համապատասխան մինչև 2019 թվականի հունվարի 1-ը ժամկետային ավանդի բացման իրավունքը ծագած անձանց համար ավանդները բացվում են՝ հաշվի չառնելով երեխայի ծնվելու օրվանից վեց ամսվա ընթացքում դիմելու սահմանափակումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 20-ի «Պետական նպաստների, ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների մասին» N 15-Ն որոշումը:

**«Հաստատում եմ»**

**ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Բ. ՍԱՀԱԿՅԱՆ**



**Կ Ա Ր Գ**  
**ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են պետական նպաստների (այսուհետ՝ նպաստ) նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները:

Սույն կարգի գործողությունը տարածվում է Արցախի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց վրա:

2. Սույն կարգի իմաստով նպաստի իրավունք ունեն.

1) 18 տարին չլրացած՝

ա. բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից հաշմանդամ երեխայի կարգավիճակ ստացած անձինք (այսուհետ՝ հաշմանդամ երեխա),

բ. ամուսնության մեջ չգտնվող ծնողների երեխաները՝ հայրություն ճանաչված չլինելու դեպքում (այսուհետ՝ միայնակ մոր երեխա),

գ. երեխաներ, որոնց ծնողները կամ միակ ծնողը մահացել են (է) կամ զրկվել են (է) ծնողական իրավունքներից կամ ճանաչվել են (է) անգործունակ կամ խուսափում են (է) երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ճանաչվել են (է) մահացած կամ անհայտ են (է) (այսուհետ՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխա),

դ. երեխաներ, որոնց ծնողներից մեկը մահացել է կամ սահմանված կարգով ճանաչվել է մահացած կամ զրկվել է ծնողական իրավունքներից կամ ճանաչվել է անգործունակ կամ խուսափում է երեխաների դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից (այսուհետ՝ միակողմանի ծնողագուրկ երեխա),

ե. դատական կարգով սահմանված՝ ալիմենտ ստացող երեխաները (այսուհետ՝ ալիմենտ ստացող երեխա),

զ. շարքային և կրտսեր հրամանատարական կազմերի՝ ժամկետային զինծառայողների երեխաները (այսուհետ՝ ժամկետային զինծառայողների երեխա),

է. բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից 1-ին խմբի հաշմանդամ (անկախ պատճառական կապից) ճանաչված անձանց երեխաները (այսուհետ՝ 1-ին խմբի հաշմանդամի երեխա),

ը. բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից 2-րդ խմբի հաշմանդամ (անկախ պատճառական կապից) ճանաչված անձանց երեխաները (այսուհետ՝ 2-րդ խմբի հաշմանդամի երեխա),

թ. ընտանիքում ծնված 3-րդ, 4-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխան՝ անկախ ընտանիքում երեխաների չափահաս լինելու հանգամանքից.

ժ. 18 տարին չլրացած չորս երեխա ունեցող ընտանիքների երեխաները (այսուհետ՝ չորս անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների երեխաներ),

ժա. սկսած 2009 թվականի հունվարի 1-ից՝ ընտանիքի ավագ երեխայի 18 տարին լրանալուց հետո, անչափահաս երեք երեխա ունեցող ընտանիքների երեխաները (այսուհետ՝ երեք անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների երեխաներ).

2) մինչև երկու տարեկան երեխա խնամող անձինք:

3. Նպաստի իրավունք ունեցող անձի կարգավիճակից կախված՝ նպաստի գործակիցներն են.

Հ/Հ	Կատեգորիաներ	Գործակից
1.	18 տարին չլրացած երեխաներ, այդ թվում՝	
1)	հաշմանդամ երեխաներ	3.0
2)	միայնակ մոր երեխաներ	2.0

3)	առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ	7.0
4)	միակողմանի ծնողագուրկ երեխաներ	3.5
5)	ալիմենտ ստացող երեխաներ	1.3
6)	ժամկետային զինծառայողների երեխաներ	1.5
7)	1-ին խմբի հաշմանդամների երեխաներ	2.5
8)	2-րդ խմբի հաշմանդամների երեխաներ	1.5
9)	ընտանիքում ծնված 3-րդ երեխան	0.5
	4-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխան	0.7
10)	չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների երեխաներ. 1-ին երեխան	1.5
	2-րդ երեխան	1.5
	3-րդ երեխան	2.0
	4-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխան	2.2
11)	երեք անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների երեխաներ. 2-րդ երեխան	1.0
	3-րդ երեխան	1.5
	4-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխան	1.7
12)	Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված զինծառայողների երեխաներ	7.0
2.	Մինչև երկու տարեկան երեխա խնամող անձինք	2.5

Սույն կետի աղյուսակի 1-ին կետի 9-րդ ենթակետում նշված 3-րդ, 11-րդ ենթակետում նշված 3-րդ, 4-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար նպաստները վճարվում են մինչև նրանց 18 տարին լրանալը:

4. Մինչև 18 տարեկան երեխան նպաստի իրավունք ունի, եթե.

1) երեխայի ծնողներից մեկը կամ միակ ծնողը կամ խնամակալն ունի Արցախի Հանրապետությունում մշտական հաշվառում.

2) երեխայի ծնողներից մեկը զինվորական ծառայություն է անցնում Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի շարքերում (բացառությամբ՝ շարքային և կրտսեր հրամանատարական կազմերի ժամկետային զինծառայողների)՝ անկախ Արցախի Հանրապետությունում մշտական հաշվառում ունենալու հանգամանքից:

5. Նպաստ նշանակում են անձի մշտական հաշվառման վայրի, իսկ սույն կարգի 4-րդ և 6-րդ կետերի 2-րդ ենթակետերում նշված դեպքերում՝ ծառայության կամ փաստացի բնակության վայրի՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունները (այսուհետ՝ գործակալություն):

6. Մինչև 2 տարեկան երեխա խնամող անձինք նպաստի իրավունք ունեն, եթե.

1) երեխայի ծնողներից մեկը կամ միակ ծնողը կամ խնամակալն ունի Արցախի Հանրապետությունում մշտական հաշվառում.

2) երեխայի ծնողներից մեկը զինվորական ծառայություն է անցնում Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի շարքերում (բացառությամբ՝ շարքային և կրտսեր հրամանատարական կազմերի ժամկետային զինծառայողների)՝ անկախ Արցախի Հանրապետությունում մշտական հաշվառում ունենալու հանգամանքից:

7. Նպաստները նշանակվում և վճարվում են երեխայի ծնողներին կամ միակ ծնողին կամ խնամակալին:

8. Անձնագիր ունեցող 16 տարեկան անձն իրավունք ունի նպաստ նշանակելու համար դիմել անձամբ՝ Արցախի Հանրապետությունում մշտական հաշվառում ունենալու դեպքում:

9. Որդեգրողները նպաստի իրավունք ունեն ծնողներին համահավասար, իսկ որդեգրվածները՝ հարազատ զավակներին համահավասար:

10. Բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում ապրող անձը նպաստի իրավունք չունի:

11. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունը երկշաբաթյա կտրվածքով էլեկտրոնային եղանակով նախարարություն է ներկայացնում քաղաքացիական կացության ակտերի գրանցման համակարգում գրանցված՝ ծնված և մահացած երեխաների վերաբերյալ տեղեկությունները:

12. Գործակալությունը սույն կարգի 11-րդ կետում նշված տեղեկությունների հիման վրա՝

1) նշանակում է մինչև երկու տարեկան երեխա խնամող անձի նպաստը.

2) հինգ աշխատանքային օրվա ընթացքում ծնողներին գրավոր ծանուցում է 18 տարին չլրացած երեխային նպաստ նշանակելու համար լրացուցիչ փաստաթղթեր գործակալություն ներկայացնելու մասին, բացառությամբ սույն կետի 3-րդ պարբերությամբ նախատեսված դեպքի:

Սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը ծանուցումը ստանալու օրվանից երեք ամսվա ընթացքում գործակալություն ներկայացնելու դեպքում նպաստը նշանակվում է երեխայի ծնվելու օրվանից, իսկ երեք ամսվա ժամկետը լրանալուց հետո ներկայացնելու դեպքում՝ փաստաթղթերը ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Այն դեպքում, երբ անձը նպաստի իրավունքը ձեռք է բերում սույն կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված ժամկետը լրանալուց հետո, նպաստը նշանակվում և վճարվում է սույն կարգի 13-14-րդ կետերով նախատեսված փաստաթղթերն իր փաստացի բնակության վայրը սպասարկող գործակալություն ներկայացնելու դեպքում, բայց ոչ ավելի, քան դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա համար:

13. Նպաստ նշանակելու համար սույն կարգի 7-րդ կետում նշված անձն իր փաստացի բնակության վայրը սպասարկող գործակալություն է ներկայացնում գրավոր դիմում, տեղեկանք փաստացի բնակության վայրի և ընտանիքի կազմի մասին, ինչպես նաև՝

1) հաշմանդամ երեխաների, 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամների երեխաների համար սահմանված նպաստի դեպքում՝ հաշմանդամության մասին բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից տրված տեղեկանքները և դրանց պատճենները.

2) միակողմանի ծնողագուրկ երեխաների համար սահմանված նպաստի դեպքում՝ երեխայի ծնողի մահվան վկայականը կամ մահացած կամ անգործունակ ճանաչելու կամ ծնողական իրավունքից զրկելու մասին դատարանի վճիռը և դրա պատճենը, կամ երեխայի (երեխաների) դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից խուսափելու փաստը հաստատող համապատասխան տեղեկանք (տեղեկանքներ) և դրանց պատճենները.

3) առանց ծնողական խնամքի մնացած երեխաների համար սահմանված նպաստի դեպքում՝ երեխայի ծնողի (ծնողների) մահվան վկայականը (վկայականները) կամ մահացած կամ անգործունակ ճանաչելու կամ ծնողական իրավունքից զրկելու մասին դատարանի վճիռը (վճիռները) կամ ծնողի (ծնողների) անհայտ լինելու կամ երեխայի (երեխաների) դաստիարակությունից կամ նրանց իրավունքների և շահերի պաշտպանությունից խուսափելու փաստը հաստատող համապատասխան տեղեկանք (տեղեկանքներ) և դրանց պատճենները.

4) միայնակ մոր երեխաների համար սահմանված նպաստի դեպքում՝ երեխայի ծննդյան վկայականում հոր վերաբերյալ տեղեկությունների գրանցման մասին քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից տրված տեղեկանքը և դրա պատճենը.

5) ալիմենտ ստացող երեխաների համար սահմանված նպաստի դեպքում՝ ալիմենտ սահմանելու մասին դատարանի վճիռը, ամուսնալուծության կամ հայրության ճանաչման վկայականը և դրանց պատճենները.

6) ժամկետային զինծառայողների երեխաների համար սահմանված նպաստի դեպքում՝ երեխայի ծնողի՝ ժամկետային զինծառայության մեջ գտնվելու մասին զինվորական մասից տրված տեղեկանքը.

7) Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ գոհված զինծառայողների երեխաների համար սահմանված նպաստի դեպքում՝ երեխայի ծնողի մահվան վկայականը և դրա պատճենը, համապատասխան պետական լիազոր մարմնի տված տեղեկանքը՝ ծնողի գոհվելու մասին:

Արցախի Հանրապետությունում մշտական հաշվառում չունեցող, սակայն Արցախի Հանրապետությունում զինվորական ծառայություն անցնող անձինք ներկայացնում են նաև Արցախի Հանրապետությունում զինծառայության մեջ գտնվելու մասին զինվորական մասից տրված տեղեկանքը:

14. Եթե երեխայի ծնողներից մեկն ունի Հայաստանի Հանրապետությունում մշտական հաշվառում, ապա նպաստը նշանակվում է վերջինիս մշտական հաշվառման վայրի նպաստ նշանակող ստորաբաժանումից նպաստի գործը կամ նմանատիպ նպաստ նշանակված չլինելու մասին տեղեկանք ստանալու դեպքում:

15. Նպաստ նշանակելու համար դիմումը բոլոր անհրաժեշտ փաստաթղթերով ընդունելուց հետո նպաստ նշանակող ստորաբաժանումը յոթ աշխատանքային օրվա ընթացքում դրանք քննարկում է և կայացնում որոշում:

16. Դիմումը մերժելու մասին որոշում կայացնելու դեպքում գործակալությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցում է անձին՝ նշելով մերժելու պատճառը, բողոքարկելու կարգը և վերադարձնում բոլոր փաստաթղթերը:

17. Նպաստ նշանակելու դեպքում գործակալությունը անձի համար կազմում է նպաստի գործ, որտեղ պահվում են սույն կարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

18. Սույն կարգի 3-րդ կետի աղյուսակի 1-ին կետով նախատեսված նպաստներից երկու և ավելի նպաստի իրավունք ունեցող անձին իր ընտրությամբ նշանակվում է մեկ նպաստ:

19. Ընտանիքում նպաստ ստանալու իրավունք ունեցող երկու և ավելի անձանց դեպքում՝ նպաստ է նշանակվում և վճարվում յուրաքանչյուրի հաշվով:

20. Յուրաքանչյուր ամսվա նպաստը վճարվում է տվյալ ամսվա ընթացքում՝ ըստ Արցախի Հանրապետությունում անձի փաստացի բնակության վայրի, իսկ անձի՝ գրավոր դիմելու դեպքում, վճարող կազմակերպության գրասենյակում:

21. Նպաստ վճարելու ծառայությունների ծախսերը կատարվում են պետական բյուջեում այդ նպատակով նախատեսված միջոցներից:

22. Արցախի Հանրապետության տարածքում հաշվառման կամ բնակության վայրը փոխելու դեպքում անձը գրավոր դիմում է նոր հաշվառման կամ բնակության վայրի գործակալություն՝ ներկայացնելով բնակվելու մասին տեղեկանքը: Նոր հաշվառման կամ բնակության վայրի գործակալությունը նախկին հաշվառման կամ բնակության վայրի գործակալությունից պահանջում է նպաստի գործը: Նպաստի գործը ստանալուց հետո ստուգվում են դրանում առկա փաստաթղթերի ճշտությունը, հաշվարկում նպաստի չափը և նպաստ վճարելը վերսկսվում է անձի նախկին բնակության վայրում նպաստի վճարման դադարեցման օրվանից:

23. Նպաստի գործն ուղարկող գործակալությունը նպաստի գործի հետ ուղարկում է նաև նպաստի վերջին վճարման մասին տեղեկանքը:

24. Նպաստը կարող է վճարվել լիազորագրով: Նպաստը մեկ լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել 12 ամսից ոչ ավելի՝ սկսած նպաստ չստացած ամսից:

25. Անձը պարտավոր է նպաստի իրավունք տվող հանգամանքների վերացման կամ փոփոխման մասին մեկամայա ժամկետում տեղեկացնել գործակալությանը:

26. Նպաստից պահումներ կարող են կատարվել՝

1) օրինական ուժի մեջ մտած դատավճիռների, վճիռների հիման վրա.

2) սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու, նպաստի իրավունք տվող հանգամանքների վերացման կամ փոփոխման մասին տեղեկություններ չներկայացնելու հետևանքով անձին ավել վճարված գումարները հետ գանձելու մասին գործակալության որոշման և անձի գրավոր համաձայնության հիման վրա, եթե վճարված նպաստի գումարի չափը չի գերազանցում որոշում կայացնելու ամսվան հաջորդող ամսվա նպաստի գումարի հնգապատիկը:

Անձի համաձայնության բացակայության դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ ավել վճարված նպաստի գումարը գերազանցում է սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված չափը, ավել վճարված նպաստի գումարը բռնագանձվում է դատական կարգով՝ նախարարության կողմից ներկայացված հայցի հիման վրա:

27. Նպաստից կատարվող պահումների չափը հաշվարկվում է անձին վճարվելիք ամսական գումարից:

28. Նպաստից կատարվող պահումների ընդհանուր գումարը պետք է չգերազանցի նպաստի 50 տոկոսը:

29. Գործակալության աշխատակցի մեղքով (գործողությունների կամ անգործության արդյունքում) ավել վճարված նպաստի գումարը գործակալության աշխատակցի համաձայնությամբ, գործակալության հետ փոխհամաձայնեցված ժամանակացույցի հիման վրա, պահվում է աշխատակցից, իսկ համաձայնության բացակայության դեպքում՝ բռնագանձվում դատական կարգով:

30. 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամների երեխաներին կամ հաշմանդամ երեխաներին նշանակված նպաստը վճարելը կասեցվում է հաշմանդամության ժամկետը լրանալու դեպքում՝ նշված հանգամանքի առաջացման ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Կասեցված նպաստի վճարումը վերսկսվում է կասեցման օրվանից, եթե սույն կետի 1-ին պարբերության մեջ նշված անձը հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո երեք ամսվա ընթացքում կրկին հաշմանդամ ճանաչվելու և նպաստի իրավունքը պահպանելու դեպքում հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ հաշմանդամ ճանաչվելու օրվանից վեց ամսվա ընթացքում, գործակալություն է ներկայացնում բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից տրված՝ հաշմանդամությունը հաստատող տեղեկանքը և դրա պատճենը:

Սույն կետով սահմանված կասեցման ժամանակահատվածի համար նպաստը վճարվում է մինչև կասեցումն ունեցած հաշմանդամության խմբի համար հաշվարկված նպաստի չափով:

31. Նպաստ վճարելը դադարեցվում է՝

1) անձի կամ նպաստի իրավունք ունեցող անձի մահվան, ինչպես նաև մահացած ճանաչվելու դեպքում.

2) անձի կողմից տասներկու ամիս անընդմեջ անձամբ նպաստ չստանալու դեպքում.

3) նպաստի իրավունք տվող հանգամանքների վերացման դեպքում.

4) նպաստի իրավունք ունեցող 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամների երեխաների կամ հաշմանդամ երեխաների պարագայում՝ հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո, երեք ամսվա ընթացքում կրկին հաշմանդամ չճանաչվելու դեպքում.

5) անձի կամ նպաստի իրավունք ունեցող անձի՝ պետության լրիվ խնամքի տակ անցնելու դեպքում.

6) անձի կամ նպաստի իրավունք ունեցող անձի՝ օտարերկրյա պետություն մշտական բնակության մեկնելու դեպքում.

7) նպաստի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում:

32. Սույն կարգի 31-րդ կետում նշված դեպքերում նպաստ վճարելը դադարեցվում է դեպքն առաջանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

33. Նշանակված, սակայն չստացված նպաստի գումարները վճարվում են անցած ժամանակահատվածի համար, սակայն դիմելու ամսվան նախորդող մեկ տարուց ոչ ավելի:

34. Գործակալության մեղքով չվճարված նպաստի գումարները վճարվում են առանց ժամկետի սահմանափակման:

35. Սույն կարգի 33-34-րդ կետերում նշված դեպքերում չստացված նպաստի գումարը վճարվում է միանվագ՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա ընթացքում:

36. Սույն կարգի 2-րդ կետում չընդգրկված՝ մինչև 2009 թվականի հունվարի 1-ը դրամական օգնություն ստացող Արցախի Հանրապետության Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում բնակվող 2-16 տարեկան անձանց վճարումները շարունակվում են 2 000 ՀՀ դրամի չափով, իսկ ազատագրված վայրերում պատիժ կրող դատապարտված անձանց երեխաների նպաստների վճարումները՝ մինչև ազատագրված ժամկետի ավարտը, բայց ոչ ավելի, քան մինչև երեխայի 18 տարին լրանալը՝ 10 000 ՀՀ դրամի չափով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԶՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**Կ Ա Ր Գ**  
**ԵՐԵՒԱՅԻ ԾՆՆՆՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ԼՊԱՍՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

1. Մույն կարգով կարգավորվում են երեխայի ծննդյան միանվագ նպաստի (այսուհետ՝ միանվագ նպաստ) տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Միանվագ նպաստը տրվում է Արցախի Հանրապետությունում փաստացի բնակվող՝ երեխայի ծնողներից մեկին կամ միակ ծնողին կամ որդեգրողին կամ խնամակալին՝

1) Արցախի Հանրապետությունում մշտական հաշվառում ունենալու դեպքում.

2) անկախ Արցախի Հանրապետությունում մշտական հաշվառում ունենալու հանգամանքից, եթե երեխայի ծնողներից մեկը զինվորական ծառայություն է անցնում Արցախի Հանրապետության պաշտպանության բանակում՝ բացառությամբ շարքային և կրտսեր հրամանատարական կազմերի ժամկետային զինվորական ծառայություն անցնողներից:

Երեխայից հրաժարվելու դեպքում երեխայի ծնողները կորցնում են միանվագ նպաստի իրավունքը:

3. Միանվագ նպաստի գործակիցներն են.

1) 1-ին երեխայի ծննդյան դեպքում՝ 1.0.

2) 2-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 2.0.

3) 3-րդ երեխայի ծննդյան դեպքում՝ 5.0.

4) 4-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան դեպքում՝ 7.0:

4. Միանվագ նպաստ ստանալու համար սույն կարգի 2-րդ կետում նշված անձինք գրավոր դիմում են իրենց մշտական հաշվառման վայրի կամ զինվորական ծառայության կամ փաստացի բնակության վայրի՝ Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալություններ (այսուհետ՝ գործակալություն)՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.

1) երեխայի ծննդյան վկայականի պատճենը, իսկ ծնվելուց հետո չորս շաբաթվա ընթացքում մահացած երեխայի համար՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի տված ծննդի պետական գրանցման փաստը հաստատելու մասին փաստաթղթի պատճենը.

2) տեղեկանք բնակության վայրի և ընտանիքի կազմի մասին.

3) խնամակալության կամ որդեգրման մասին փաստաթղթի պատճենը.

4) ծնողի կամ խնամակալի կամ որդեգրողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

5) ծնողի կամ խնամակալի կամ որդեգրողի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքը և դրա պատճենը:

5. Եթե երեխայի ծնողներից մեկն ունի Հայաստանի Հանրապետությունում մշտական հաշվառում, ապա նպաստը նշանակվում է միանվագ նպաստ ստացած չլինելու մասին վերջինիս մշտական հաշվառման վայրի նպաստ նշանակող ստորաբաժանման կողմից տրված տեղեկանքի առկայության դեպքում:

6. Գործակալությունում փաստաթղթերի բնօրինակները համադրվում են պատճենների հետ, պատճենների վրա կատարվում է «Բսկականի հետ ճիշտ է» գրառումը և կնքվում: Ծննդյան վկայականի բնօրինակի դարձերեսը կնքվում է, կատարվում է «Ծննդյան միանվագ նպաստը վճարված է» գրառումը, թվագրվում, ստորագրվում և կնքվում:

7. Միանվագ նպաստը նշանակվում է երեխայի ծնողներից մեկի կամ միակ ծնողի կամ որդեգրողի կամ խնամակալի կողմից սույն կարգի 4-5-րդ կետերում նշված դիմումը և համապատասխան փաստաթղթերը գործակալություն ներկայացնելու դեպքում:

8. Միանվագ նպաստը նշանակվում է ծնված յուրաքանչյուր երեխայի համար:

9. Միանվագ նպաստի նշանակման-վճարման համար անհրաժեշտ փաստաթղթերը պահվում են գործակալությունում և իրականացվում է առանձին հաշվառում:

10. Գործակալության կողմից նախարարությանը ամսական երկու անգամ տրամադրված տեղեկությունների հիման վրա կազմվում է միանվագ նպաստ տրամադրելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին հայտ-պահանջագիր և ներկայացվում Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

11. Միանվագ նպաստի վճարումներն իրականացվում են «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության մասնաճյուղերի (այսուհետ՝ մասնաճյուղ) միջոցով՝ գործակալության կողմից կազմված վճարման ցուցակներով: Վճարումները կատարելուց հետո մասնաճյուղերը կիսամյակային հաշվետվություն են ներկայացնում գործակալություններ, որոնք էլ, իրենց հերթին՝ նախարարություն:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**



**Կ Ա Ր Գ**  
**ՉԱՓԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ**

1. Սույն կարգով կարգավորվում են ընտանիքում ծնված 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխային՝ 18 տարին լրանալու դեպքում, չափահասության նպաստի (այսուհետ՝ նպաստ) տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Նպաստի չափերն են.

1) 3-րդ երեխայի համար 500 000 ՀՀ դրամ.

2) 4-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար 700 000 ՀՀ դրամ:

3. Նպաստը տրամադրվում է 18 տարին լրացած անձին (այսուհետ՝ անձ):

4. Անձը նպաստի իրավունք ունի, եթե հաշվառված է Արցախի Հանրապետությունում և նրա ծնվելու պահին ծնողները ունեցել են Արցախի Հանրապետության հաշվառում:

5. Նպաստ ստանալու համար անձը Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն (այսուհետ՝ գործակալություն) է ներկայացնում.

1) դիմում.

2) իր և ծնող(ներ)ի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.

3) իր և ծնող(ներ)ի հանրային ծառայությունների համարանիշները կամ հանրային ծառայությունների համարանիշներ չստանալու վերաբերյալ տեղեկանքները և դրանց պատճենները.

4) անհրաժեշտության դեպքում սույն կարգով նախատեսված դրույթներին համապատասխան այլ փաստաթղթեր:

6. Գործակալության կողմից նախարարությանը ամիսը մեկ անգամ տրամադրված տեղեկությունների հիման վրա կազմվում է 18 տարին լրացած անձանց նպաստ տրամադրելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների մասին հայտ-պահանջագիր և ներկայացվում Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

7. Նպաստի վճարումներն իրականացվում են «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության մասնաճյուղերի (այսուհետ՝ մասնաճյուղ) միջոցով գործակալության կողմից կազմված վճարման ցուցակներով: Վճարումները կատարելուց հետո մասնաճյուղերը կհսամյակային հաշվետվություն են ներկայացնում գործակալություններ, որոնք էլ, իրենց հերթին, նախարարություն:

8. Նպաստը ծնողին կամ խնամակալին տրամադրվում է այն դեպքում, երբ սույն կարգի 1-ին կետում նշված երեխան մահացել է երկու ամիսը լրանալուց հետո: Նպաստը ստանալու համար ծնողը կամ խնամակալը գործակալություն է ներկայացնում երեխայի մահվան վկայականի պատճենը և իր անձը հաստատող փաստաթուղթը: Գործակալությունը համապատասխան մասնաճյուղի միջոցով ապահովում է նպաստի տրամադրումը ծնողին կամ խնամակալին:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ**  
**ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ**  
**ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Ա. ԼԱԶԱՐՅԱՆ**

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԵՐԱԳՈՒՑՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԱՀ վերաքննիչ դատարանի որոշում Վարչական գործ ԸԻԴ/0231/05/16  
Վարչական գործ ԸԻԴ/0231/05/16  
Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան  
Դատավորներ՝ Հ.Գրիգորյան  
Կ.Սաղյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ 28-ին մարտի 2019թ.

Արցախի Հանրապետության Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝ վճռաբեկության կարգով.

նախագահությամբ դատավոր՝ մասնակցությամբ դատավորներ՝	Հ.Խաչատրյանի Հ.Աբրահամյանի Գ.Գրիգորյանի Ի.Կարապետյանի Կ.Ղարայանի
---	--

դռնբաց դատական նիստում, քննելով ըստ հայցի Արթուր Վյաչեսլավի Հակոբյանի ընդդեմ Ստեփանակերտի քաղաքային համայնքի՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին ԸԻԴ/0231/05/16 վարչական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2019 թվականի հունվարի 22-ի որոշման դեմ հայցվոր Արթուր Հակոբյանի և նրա ներկայացուցիչ Արտյուշա Մադաթյանի կողմից բերած վճռաբեկ բողոքը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

**1.Գործի դատավարական նախապատմությունը**

Արթուր Վյաչեսլավի Հակոբյանը (այսուհետ, նաև՝ Հայցվոր) 2016 թվականի նոյեմբերի 15-ին հայցադիմում է ներկայացրել Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ, նաև՝ Վարչական դատարան կամ Առաջին ատյանի դատարան) ընդդեմ Ստեփանակերտի քաղաքային համայնքի (այսուհետ, նաև՝ Քաղաքապետարան կամ Պատասխանող)՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջով:

Վարչական դատարանի (դատավոր Կ.Մելքումյան) 2016 թվականի նոյեմբերի 22-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ և հարուցվել վարչական գործ, իսկ 2016 թվականի դեկտեմբերի 09-ի որոշմամբ՝ հրավիրվել նախնական դատական նիստ:

Վարչական դատարանը 2016 թվականի դեկտեմբերի 19-ին հայցի հիմքը լրացնելու դիմումի ընդունման մասին որոշում է կայացրել:

2016 թվականի դեկտեմբերի 20-ին վարչական գործը հանձնվել է դատավոր Ռ.Ջանգիրյանին:

Վարչական դատարանի 2016 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ վարչական գործն ընդունվել է վարույթ և հրավիրվել նախնական դատական նիստ:

Վարչական դատարանի 2017 թվականի փետրվարի 01-ի որոշմամբ հայցի հիմքը լրացնելու մասին Հայցվորի և նրա ներկայացուցիչ Արտյուշա Մադաթյանի դիմումն ընդունվել է:

Վարչական դատարանի 2017 թվականի փետրվարի 24-ի որոշմամբ Արթուր Բաղդասարի Բաղդասարյանը ներգրավվել է որպես երրորդ անձ (այսուհետ, նաև՝ Երրորդ անձ):

Վարչական դատարանի 2017 թվականի մարտի 13-ի որոշմամբ նշանակվել է դատաշինարարատեխնիկական փորձաքննություն: Նույն օրվա մեկ այլ որոշմամբ գործի վարույթը կասեցվել է:

Վարչական դատարանի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի որոշմամբ գործի վարույթը վերսկսվել է և հրավիրվել նախնական դատական նիստ:

Վարչական դատարանի 2018 թվականի փետրվարի 02-ի որոշմամբ վարչական գործը նշանակվել է դատական քննության:

Վարչական դատարանի 2018 թվականի մարտի 19-ի վճռով հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ 2018 թվականի ապրիլի 18-ին վերաքննիչ բողոք են ներկայացրել Հայցվորն ու նրա ներկայացուցիչ Ա.Մադաթյանը:

Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2018 թվականի ապրիլի 25-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննության:

Վերաքննիչ դատարանի 2018 թվականի հունիսի 05-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է և Վարչական դատարանի 2018 թվականի մարտի 19-ի վճիռը թողնվել անփոփոխ:

Վերոնշյալ որոշման դեմ Հայցվորը և նրա ներկայացուցիչ Ա.Մադաթյանը 2018 թվականի հուլիսի 04-ին վճռաբեկ բողոք են ներկայացրել Գերագույն դատարան՝ խնդրելով բեկանել Վերաքննիչ դատարանի 2018 թվականի հունիսի 05-ի որոշումը, փոփոխել այն՝ կայացնել դատական ակտ ներկայացված հայցը՝ բավարարելու մասին կամ գործը վերադարձնել Վարչական դատարան՝ նոր քննության:

Գերագույն դատարանի 2018 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանի հունիսի 05-ի որոշումը բեկանվել է և գործն ուղարկվել Վարչական դատարան՝ նոր քննության:

Վարչական դատարանի 2018 թվականի սեպտեմբերի 05-ի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, հարուցվել վարչական գործ և այն նշանակվել դատական քննության:

Վարչական դատարանի 2018 թվականի նոյեմբերի 19-ի վճռով հայցը բավարարվել է:

Նշված վճռի դեմ 2018 թվականի դեկտեմբերի 12-ին վերաքննիչ բողոք է բերել Երրորդ անձը:

Վարչական գործն ու վերաքննիչ բողոքը Վերաքննիչ դատարանի դատական կազմին են հանձնվել 2018 թվականի դեկտեմբերի 19-ին:

2018 թվականի դեկտեմբերի 20-ին Վերաքննիչ դատարանը որոշում է

կայացրել վերաքննիչ բողոքը վարույթ ընդունելու և Վարչական դատարանի դատական ակտը դռնբաց դատական նիստում վերանայելու մասին:

Վարչական դատարանի 2018 թվականի նոյեմբերի 19-ի վճռի դեմ 2018 թվականի դեկտեմբերի 21-ին վերաքննիչ բողոք է ներկայացրել նաև Քաղաքապետարանը, միաժամանակ, միջնորդելով վերականգնել վերաքննիչ բողոք ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը:

Վերաքննիչ դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 24-ի որոշմամբ բողոքաբերի միջնորդությունը բավարարվել է, վերականգնվել դատավարական ժամկետը և բողոքն ընդունվել վարույթ:

Վերաքննիչ դատարանի 2019 թվականի հունվարի 22-ի որոշմամբ վերաքննիչ բողոքները բավարարվել են մասնակիորեն: Վարչական դատարանի 2018 թվականի նոյեմբերի 19-ի վճիռը մասնակիորեն բեկանվել և փոփոխվել է, Հայցվորի պահանջը բավարարվել է մասնակիորեն՝ վարչական ակտն անվավեր է ճանաչվել մասնակի՝ փորձագետի կողմից արձանագրված նորմերի խախտման մասով:

Նշված որոշման դեմ 2019 թվականի փետրվարի 13-ին վճռաբեկ բողոք են ներկայացրել Հայցվորն ու նրա ներկայացուցիչ Ա.Մադաթյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը**

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբերների՝ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներով, որոնք ազդել են գործի ելքի վրա: Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել և սխալ է կիրառել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մասը և խախտել է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 6-րդ, 24-26-րդ, 113-րդ հոդվածների պահանջները:

Նշված պնդումը բողոք բերած անձինք հիմնավորում են հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը ներկայացված վերաքննիչ բողոքի քննության ընթացքում որոշում է կայացրել ոչ թե հայցադիմումի ու Առաջին ատյանի դատարանի կողմից դատաքննությամբ ձեռք բերված ապացույցների շրջանակներում, այլ փորձել է քաղաքապետի վիճարկվող որոշումը համապատասխանեցնել ՇՀԽՊ 2.07.01.-89-ի 6.39 կետի պահանջներին, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ ավտոտնակի և շենքի միջև եղած 6.2 մետր հեռավորությունը դարձնելով 10 մետր, ինքնին ստացվում է, որ այդ պարագայում որոշումը չի համապատասխանում նույն ՇՀԽՊ 2.07.01.-89-ի 6.36 կետի պահանջներին, այսինքն՝ այն պակաս է 30 քմ մակերեսից, այդ այն դեպքում, երբ Գերագույն դատարանը սույն գործով կայացված առ 22.08.2018թ. որոշմամբ հստակ նշել է, որ հողամասի հեռավորությունը բնակելի շենքից կազմում է 6.2 մետր՝ թույլատրելի 10 մետրի փոխարեն, իսկ հեռավորության ապահովման պայմաններում կփոխվի անհրաժեշտ հատկացվելիք հողամասի մակերեսը, մասնավորապես, այն կփոքրանա անհրաժեշտ 30 քմ-ից, ինչն էլ բացառում է վարչական ակտի մասնակի անվավեր ճանաչելու հնարավորությունը:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերները խնդրել են բեկանել ԸԻԴ/0231/05/16 վարչական գործով Վերաքննիչ դատարանի 2019 թվականի հունվարի 22-ի որոշումը և օրինական ուժ տալ Վարչական դատարանի 2018 թվականի նոյեմբերի 19-ի վճռին կամ գործն ուղարկել Վարչական դատարան՝ նոր քննության:

### **3.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Սույն բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 44 շենքի թիվ 1 բնակարանը բաժնային սեփականության իրավունքով՝ 1/5 բաժնով պատկանում է Հայցվորին:

2. 2014 թվականի նոյեմբերի 17-ի առուվաճառքի և գրավի /հիփոթեքի/ թիվ 5711 պայմանագրի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 44 շենքի թիվ 2 բնակարանն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է Երրորդ անձին և Արմինե Էմիլի Բաղդասարյանին:

3. 2015 թվականի հոկտեմբերի 07-ին Երրորդ անձը դիմել է Ստեփանակերտի քաղաքապետին՝ ավտոտնակի կառուցման նպատակով Վ.Վաղարշյան 44 շենքի շրջակայքից հողատարածք հատկացնելու խնդրանքով:

4. Ստեփանակերտի քաղաքապետի 2015 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 1692Ա որոշմամբ (այսուհետ, նաև՝ վիճարկվող որոշում)՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան շենքի շրջակայքում գտնվող 30 քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ավտոտնակի կառուցման համար, կառուցապատման իրավունքով հատկացվել է Երրորդ անձին:

5. Նույն որոշման համաձայն՝ տրամադրվող հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման է, փաստացի մակերեսը կազմում է 30 քառակուսի մետր, այն ընդգրկված է ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում է Ստեփանակերտ քաղաքի հողերի տարածազնահատման 3-րդ գոտում:

6. Դատաշինարարատեխնիկական փորձաքննության 2017 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՄ՝ 10013/17 եզրակացության համաձայն՝ Ստեփանակերտի քաղաքապետի 2015 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 1692Ա որոշումը համապատասխանում է ՇՈՒՍ 2.07.01.-89-ի՝ «Քաղաքաշինություն, հատակագծում և կառուցապատում քաղաքային և գյուղական բնակավայրերի» 6.36 կետի պահանջներին, ըստ որի՝ մեկ հարկանի ավտոտնակի համար հատկացվող հողամասի մակերեսը մեկ ավտոմեքենայի համար նախատեսվում է 30մ<sup>2</sup>, սակայն ավտոտնակի կառուցման պարագայում նրա հետագա նպատակային նշանակությամբ շահագործելու դեպքում խախտվում են նույն ՇՈՒՍ 2.07.01.-89-ի՝ 6.39 կետի պահանջները, մասնավորապես, նրա հեռավորությունը բնակելի շենքից կազմում է 6.2 մետր՝ թույլատրելի 10 մետրի փոխարեն:

7. Գերագույն դատարանի 2018 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ բեկանվել է սույն վարչական գործով Վերաքննիչ դատարանի 2018 թվականի հունիսի 05-ի որոշումն ու գործն ուղարկվել Վարչական դատարան նոր

քննության: Կայացված որոշմամբ արձանագրվել է Հայցվորի՝ վարչական դատավարության առումով շահագրգիռ անձ հանդիսանալու փաստը:

#### **4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները**

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի էլքի վրա, և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով:

Իրավահարաբերության ծագման պահին գործող ԼՂՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն (գործող Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մաս)՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք, իսկ 45-րդ հոդվածի համաձայն (գործող Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մաս)՝ յուրաքանչյուր ոք ունի հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ՝ անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի» (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում է նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ նույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վարչական ակտերով, գործողություններով կամ անգործությամբ՝

1. խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ ԼՂՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝ ա) խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, բ) չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ՝ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին ԼՂՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտերի ուժով,

2. նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն,

3. նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

ԱՀ Սահմանադրության և Կոնվենցիայի վերը շարադրված իրավադրոյթները վկայակոչելով և դրանց իրավական վերլուծության արդյունքում Գերագույն դատարանը 2018 թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ սույն վարչական գործն ուղարկել է նոր քննության, միաժամանակ,

արձանագրելով. «Գերագույն դատարանը գտնում է, որ պետության կողմից շինարարական նորմեր և կանոններ սահմանելն ինքնանպատակ չէ, այլ ուղղված է նաև քաղաքացիների անվտանգության ապահովմանը, իսկ Հայցվորը, լինելով վիճելի վարչական ակտով հատկացված հողամասի հարևանությամբ գտնվող բնակելի շենքի բնակիչներից մեկը, իրավունք ունի պահանջելու իր և իր երեխաների անվտանգության իրավունքի երաշխիքը:

Նշված պատճառաբանությունը հիմք է տալիս փաստելու, որ անհիմն է Վարչական դատարանի այն պատճառաբանությունը (ինչը Վերաքննիչ դատարանը թողել է օրինական ուժի մեջ), թե հողամասի հատկացման վերաբերյալ որոշումն ինքնին որևէ շինարարական նորմի խախտում չի պարունակում, ուստի չի կարող խախտել հայցվորի իրավունքը, քանի որ դատական պաշտպանության է ենթակա, նախ, ոչ միայն այն իրավունքը, որը խախտվել է, այլ նաև այն իրավունքը, որի խախտման վտանգն առկա է, և երկրորդ՝ վիճարկվող վարչական ակտով հողամասը երրորդ անձին հատկացվել է նպատակային նշանակությամբ՝ ավտոտնակ կառուցելու համար՝ կառուցապատման իրավունքով, որի կառուցման դեպքում էլ վերը նշված ՇՀԽՄ 2.07.01.-89-ի՝ 6.39 կետի կանոնը կխախտվի:»:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ստորադաս դատարանները՝ նշված որոշմանը համահունչ փաստելով Հայցվորի՝ վարչական դատավարությանը մասնակից լինելու առումով շահագրգիռ անձ հանդիսանալու հանգամանքը՝ գործի քննությունը կենտրոնացրել են վիճելի վարչական ակտի իրավաչափության ստուգման հարցերի վրա: Ընդ որում, և՛ Առաջին ատյանի, և՛ Վերաքննիչ դատարանները գտել են, որ վարչական ակտը կայացվել է օրենքի խախտմամբ, հետևաբար՝ այն անհրաժեշտ է ճանաչել անվավեր: Վերջինիս հարցում, սակայն, ստորադաս դատարանների դիրքորոշումները տարբերվում են: Այսպես՝

Վարչական դատարանը հայցը բավարարել է և վարչական ակտն ամբողջությամբ ճանաչել անվավեր հետևյալ հիմնավորումներով՝ «... վարչական մարմնի՝ գործի փաստական հանգամանքները պարզելու, բազմակողմանի, լրիվ ու օբյեկտիվ քննարկելու օրենսդրի կողմից սահմանված պարտականությունը պատշաճ չկատարելու, այն է՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան փողոցի թիվ 44 շենքի շրջակայքում գտնվող 30 ք/մ մակերեսով հողամասն ավտոտնակ կառուցելու համար կառուցապատման իրավունքով Ա.Բաղդասարյանին հատկացնելու վարույթի ընթացքում այլ անձանց իրավունքների խախտման փաստը չպարզելու պայմաններում, ինչպես նաև գործող շինարարական նորմերի ու կանոնների պահանջները չպահպանելու դեպքում Ստեփանակերտի քաղաքապետի 03.11.2015թ. թիվ 1692-Ա որոշմամբ խախտվել է հայցվորի իրավունքը:

(...)

... հնարավոր չէ ամբողջականորեն ճշտել 30 քմ մակերեսով հողամասի, շենքից թույլատրելի հեռավորություն պահպանելու դեպքում, մնացած հողամասի տեղակայման դիրքը, այսինքն՝ դրա տեղակայությունը բնության մեջ՝ ըստ դրա կոորդինատների, ուստի Վարչական դատարանը գտնում է, որ ... որոշումը ... ենթակա է անվավեր ճանաչման ամբողջությամբ:»:

Այսինքն՝ Վարչական դատարանը, հիմք է ընդունել վարչական ակտով տրամադրվող կառուցապատման իրավունքի առարկա հանդիսացող

հողատարածքի՝ քաղաքաշինական նորմերի խախտում չպարունակող հատվածի անհատականացման տվյալների բացակայությունը:

Վերաքննիչ դատարանը, իր հերթին, վարչական ակտն անվավեր է ճանաչել մասնակի, արձանագրելով. «... ակտը պետք է անվավեր ճանաչել միայն Հայցվորի՝ որպես բազմաբնակարան շենքի բնակչի, իրավունքը խախտող մասով, մասնավորապես, փորձագետի 20.12.2017թ. թիվ 10013/17 եզրակացության «Հետևություններ» բաժնում և եզրակացության թիվ 1 հավելվածում նշված հատակագծի մասով, որով խախտվում է ավտոտնակ կառուցելու նպատակով Երրորդ անձին կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասի մուտքի հատվածից մինչև Վ.Վաղարշյան փողոցի թիվ 44 հասցեում գտնվող բազմաբնակարան շենքն ընկած թույլատրելի 10 մետր հեռավորությունը, քանի որ Վիճարկվող ակտով Երրորդ անձին հատկացված հողամասի մնացած հատվածը որևէ ձևով չի խախտում Հայցվորի իրավունքը»:

Այսինքն, Վերաքննիչ դատարանը շեշտը դրել է Հայցվորի իրավունքների խախտման ծավալի վրա և դրանով պայմանավորել վարչական ակտի անվավեր ճանաչելու սահմանները:

Նշված դիրքորոշումների վերաբերյալ տեսակետ հայտնելու համար Գերագույն դատարանն անհրաժեշտ է գտնում վկայակոչել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերը: Այսպես՝ նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է ա/ օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, բ/ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ որպես կանոն, վարչական ակտն անվավեր է ճանաչվում ամբողջությամբ: Վարչական ակտը մի մասով անվավեր կարող է ճանաչվել, եթե անվավեր չճանաչված մասը կարող է ուժի մեջ մնալ առանց անվավեր ճանաչված մասի:

Նշված հոդվածի բովանդակությունից հետևում է, որ վարչական ակտը դատական կարգով կարող է անվավեր ճանաչվել, եթե հաստատվի հետևյալ երկու վավերապայմանների միաժամանակյա առկայությունը.

1. վարչական ակտն ընդունվել է օրենքի խախտմամբ կամ կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում,

2. վիճարկվող վարչական ակտով խախտվել են կամ կարող են խախտվել հայցվորի Սահմանադրությամբ կամ միջազգային պայմանագրերով, օրենքներով և այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները:

Ընդ որում, իրավանորմի կարգավորումից և մասնավորապես՝ 5-րդ մասի «որպես կանոն» բառակապակցությունից, բխում է, որ օրենսդիրը սահմանել է վարչական ակտի լրիվ ծավալով անվավեր ճանաչելու հրամայականը և բացառություն է սահմանել միայն այն դեպքի համար, երբ անվավեր չճանաչված մասի ուժի մեջ մնալը հնարավոր է առանց անվավեր ճանաչված մասի: Այսինքն, վարչական ակտի անվավեր ճանաչելու համար բավարար



հիմքեր ի հայտ բերելու դեպքում գործում է այդ ակտն ամբողջությամբ անվավեր ճանաչելու կանխավարկածը, եթե միայն վարչական ակտն անվավեր ճանաչելու իրավասություն ունեցող մարմինը (սույն վարչական գործով՝ դատարանը) չի պատճառաբանում, որ տվյալ վարչական ակտը կարող է ուժի մեջ մնալ առանց անվավեր ճանաչված մասի:

Նշվածների համատեքստում, Գերագույն դատարանն արձանագրում է, որ էական նշանակություն ունի «կարող է ուժի մեջ մնալ առանց անվավեր ճանաչված մասի» նախադասության իրավական էության բացահայտումը և այս առումով Գերագույն դատարանը գտնում է, որ պարտադիր պարզման ենթակա է ոչ միայն տվյալ վարչական ակտով շահագրգիռ անձի իրավունքներին անմիջապես սպառնացող խախտման ծավալը, այլ նաև այն, թե կարող է արդյոք տվյալ վարչական ակտը մասնակիորեն մնալ ուժի մեջ՝ օրենքի պահանջներին ընդհանրապես համապատասխանելու տեսակետից: Այլ կերպ ասած՝ շահագրգիռ անձի իրավունքների ու ազատությունների նույնիսկ շատ փոքր ծավալով խախտման դեպքում տվյալ վարչական ակտը, որպես կանոն, պետք է ամբողջությամբ ճանաչվի անվավեր, եթե չի ապացուցվում, որ դրա մասնակի ուժի մեջ մնացող մասը ոչ միայն չի խախտի շահագրգիռ անձի իրավունքները, այլ՝ միաժամանակ, հնարավորություն կտա այն իրավաչափ դիտարկել՝ ըստ սկզբնական նպատակային նշանակության:

Նշվածներն արտածելով սույն վարչական գործով պարզված փաստական տվյալների վրա, Գերագույն դատարանն արձանագրում է, որ Հայցվորի իրավունքների խախտման փաստն ապացուցված լինելու պարագայում, ստորադաս դատարանների քննարկման առարկան պետք է կազմեին միայն այն հարցերը, թե՛

1. ինչ ծավալով են խախտվել շահագրգիռ անձի իրավունքները, և
2. արդյոք վիճարկվող վարչական ակտը կարող է մասնակիորեն պահպանել իր ուժը:

Նշված հարցերին պատասխանելու համար ստորադաս դատարանների խնդիրն էր պարզել, թե ինչ նպատակային նշանակություն ունի վիճարկվող վարչական ակտը, ինչու՞մ է կայանում Հայցվորի իրավունքների խախտումը և այդ խախտումը չպարունակող մասը կարող է արդյոք մնալ օրինական ուժի մեջ (եթե՛ այո, ապա ինչ պատճառաբանությամբ):

Գերագույն դատարանն արձանագրում է, որ Ստեփանակերտի քաղաքապետի 2015 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 1692Ա որոշմամբ՝ Ստեփանակերտ քաղաքի Վ.Վաղարշյան շենքի շրջակայքում գտնվող 30 քառակուսի մետր մակերեսով հողամասը՝ ավտոտնակի կառուցման համար, կառուցապատման իրավունքով հատկացվել է Երրորդ անձին: Նույն որոշման համաձայն՝ տրամադրվող հողամասի գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման է, փաստացի մակերեսը կազմում է 30 քառակուսի մետր, այն ընդգրկված է ԼՂՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում է Ստեփանակերտ քաղաքի հողերի տարածագնահատման 3-րդ գոտում:

Դատաշինարարատեխնիկական փորձաքննության 2017 թվականի դեկտեմբերի 20-ի ՀՄ՝ 10013/17 եզրակացության համաձայն՝ Ստեփանակերտի քաղաքապետի 2015 թվականի նոյեմբերի 03-ի թիվ 1692Ա որոշումը համապատասխանում է ՇՀՊ 2.07.01.-89-ի՝ «Քաղաքաշինություն, հատակա-գծում և կառուցապատում քաղաքային և գյուղական բնակավայրերի» 6.36

կետի պահանջներին, ըստ որի՝ մեկ հարկանի ավտոտնակի համար հատկացվող հողամասի մակերեսը մեկ ավտոմեքենայի համար նախատեսվում է 30մ<sup>2</sup>, սակայն ավտոտնակի կառուցման պարագայում նրա հետագա նպատակային նշանակությամբ շահագործելու դեպքում խախտվում են նույն ՇՀԻՍ 2.07.01.-89-ի՝ 6.39 կետի պահանջները, մասնավորապես, նրա հեռավորությունը բնակելի շենքից կազմում է 6.2 մետր՝ թույլատրելի 10 մետրի փոխարեն:»:

Արձանագրելով հանդերձ, որ վիճարկվող վարչական ակտը կայացվել է ավտոտնակի կառուցման նպատակով հողատարածք հատկացնելու վերաբերյալ կառուցապատման իրավունք սահմանելու առնչությամբ և գործի նյութերով հիմնավորված է, որ շահագրգիռ անձի իրավունքները խախտվել են կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքի միայն մի որոշակի մասի առումով, Գերագույն դատարանը գտնում է, որ վիճարկվող վարչական ակտը պետք է լրիվությամբ ճանաչվեր անվավեր, բացառությամբ, երբ դատարանը (տվյալ դեպքում՝ Վերաքննիչ դատարանը) գործում առկա ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով կատաճառաբաններ, որ տվյալ վարչական ակտի՝ Հայցվորի իրավունքներին չառնչվող մասը կարող է ուժի մեջ մնալ՝ քանի որ այն իրավաչափ է՝ ըստ սկզբնական նպատակային նշանակության, այն է՝ կարող է այդ մակերեսով տրամադրվել կառուցապատման իրավունքով՝ ավտոտնակ կառուցելու համար:

Վերը շարադրված դիրքորոշումները համադրելով սույն գործի փաստերին և գնահատելով ստորադաս դատարանների պատճառաբանությունները՝ Գերագույն դատարանը գտնում է, որ Վարչական դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, իսկ Վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, ստորև ներկայացվող պատճառաբանությամբ.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստերը Վարչական դատարանը պարզում է ի պաշտոնե (ex officio):

Դատարանը մատնանշում է այն փաստերը, որոնք իր կարծիքով, էական են վեճի լուծման համար, և անհրաժեշտության դեպքում կողմերից պահանջում է ներկայացնել այդ փաստերի ապացույցներ:

Դատարանը վեճի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով իրավասու է, չսահմանափակվելով վարչական դատավարության մասնակիցների միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկելու ողջամիտ միջոցներ, մասնավորապես, պահանջելու վարչական վարույթի նյութեր, տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու կողմերին անձամբ ներկայանալ դատական նիստին:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 22-րդ և 24-րդ հոդվածների 1-ին մասերի բովանդակությունից բխում է, որ դատարանը նույն օրենսգրքով սահմանված կարգով հավաքված ապացույցների հետազոտման և գնահատման միջոցով պարզում է գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը: Դատարանը, անմիջականորեն գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, որոշում է փաստի հաստատված լինելու հարցը՝ բազմակողմանի լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված իրավական նորմերի և Կոնվենցիայի 6-րդ հոդվածի պահանջներից հետևում է, որ դատարանը բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզման հանգելու համար պարտավոր է հետազոտել և գնահատել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստերը և միայն նշված պահանջների պահպանման արդյունքում որոշել հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքի քննության արդյունքներով Վերաքննիչ դատարանը կայացնում է պատճառաբանված որոշում:

Նշվածների հաշվառմամբ, Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը որևէ կերպ չի պատճառաբանել, թե արդյոք տվյալ վարչական ակտի՝ Հայցվորի իրավունքներին չառնչվող մասը կարող է ուժի մեջ մնալ՝ քանի որ այն իրավաչափ է՝ ըստ սկզբնական նպատակային նշանակության, այն է՝ կարող է այդ մակերեսով տրամադրվել կառուցապատման իրավունքով՝ ավտոտնակ կառուցելու համար: Հետևաբար, նման պատճառաբանության և գործում՝ նշվածը հաստատող որևէ ապացույցի բացակայության պայմաններում՝ վարչական ակտը մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ որոշումը հիմնավոր համարվել չի կարող: Վերջինս էլ, իր հերթին, Գերագույն դատարանին հնարավորություն է տալիս նյութական («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ԼՂՀ օրենքի 63-րդ հոդվածի 5-րդ մաս) և դատավարական (ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 117.14-րդ հոդվածի 1-ին մաս) իրավունքի նորմի խախտման վերաբերյալ վճռաբեկ բողոքի հիմքերը դիտարկել առկա և բավարար ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և Վարչական դատարանի վճռին օրինական ուժ տալու վերաբերյալ որոշում կայացնելու համար:

**5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ**

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունն այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որն իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Գերագույն դատարանը, նկատի ունենալով, որ Վարչական դատարանն օրինական ու հիմնավորված վճիռ է կայացրել իր իրավասությանը վերապահված դատական ծախսերի բաշխման հարցի վերաբերյալ, իսկ

վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, գտնում է, որ պետք է անդրադառնալ միայն վճռաբեկ բողոք բերելու համար նախատեսված պետական տուրքի հարցին: Վերջինս վճարվել է Հայցվորի կողմից, ուստի անհրաժեշտ է դրա փոխհատուցման պարտականությունը նույնպես (Վարչական դատարանի կողմից գանձման առաջադրված դատական ծախսերի հետ մեկտեղ) դնել Պատասխանողի վրա:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118.16-118.19-րդ հոդվածներով և 118.15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Գերագույն դատարանը

### Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: Բեկանել Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի ԸԲԴ 0231/05/16 վարչական գործով 2019 թվականի հունվարի 22-ի որոշումը և օրինական ուժ տալ Արցախի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին աստիճանի (վարչական) դատարանի 2018 թվականի նոյեմբերի 19-ի վճռին:

2. Ստեփանակերտի քաղաքային համայնքից հոգուտ Արթուր Հակոբյանի բռնագանձել 20.000 (քսան հազար) ՀՀ դրամ, որպես վճռաբեկ բողոք ներկայացնելու համար վճարված պետական տուրքի փոխհատուցման գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝	<u>ստորագրություն</u>	Հ.ԽԱԶԱՏՐՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
	<u>ստորագրություն</u>	Կ.ՂԱՐԱՅԱՆ